


Ասրաւ  
ուլու



891-995

Մ-35

1936

ՎԱՐԵՎԱՐ

6 NOV 201

ՄԱՐԳԱՐ

Թիֆրանցիս

891.9945

Ա-35 մը

1010  
ԿՕԶԻԿ

Հ Ա Լ Ի Կ

8 0 5 8

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ)

— — —



Հ Ա Լ Ի Կ

1936

## ՉԱԼԻԿ

(Նոր-Տարու վրույց)

Յոթ տարեկան Պետրոսը, վոր սովորում եր-  
Քաղի հայոց աւարական դպրոցում, գեկտեմ-  
բերի 31-ի առավոտյան մի անսպասելի լուր  
ևսեց մորից:

Պետրոսի հայրը՝ բանվոր Սիմոնը, աշխատում  
եր «Միրզաքեկյան յեղայրների» ծխախոտի գոր-  
ծարանում իբրև գլանակ (պապիրոս) լցնող: Ուժ  
ամիս առաջ զործարանը մեքենաներ ստացավ, և  
զլանակների բաժանմունքում աշխատող բանվոր-  
ների թիվը սաստիկ կրճատվեց: Վարչությունը  
արձակվող բանվորների ցուցակը կազմելիս աշ-  
խատեց հին բանվորներին զցել ցուցակի մեջ:  
Դրանց թվումն եր և Սիմոնը: Յերկար թափա-  
ռեց Սիմոնը, աշխատեց վորհե զործարանում  
տեղ գտնել, բայց չաջողվեց, վորովհետև հին  
բանվորներին դժվարությամբ եցին ընդունում:  
Մի առժամանակ պարագ մնարով, Սիմոնը տան  
իրերից շատ բան ծախեց անդրուսու հայթայթե-  
լու համար, բայց տեսնելով, վոր այս ծախելու

---

Պատ. Խմբագիր՝ Ռ. Ա.Հ.Բ.Ա.Բ  
Նկարիչ՝ ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Տեխ Խմբագիր՝ Գ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

բան չի մնացել և գործ գտնելու հույս չկա, մտածեց մի թեթև գործով զբաղվել, մինչև հիմնական աշխատանք գտնելը։ Նա խողանակներ ձեռք բերեց, կոշկի ներկ առավ և սկսեց փողոցում նստած կոշիկ մաքրել։ Նա նստած ծովափին՝ «նահանգապետի» պարտեզի գուան մոտ կոշիկներ եր սրբում։ Որե աշխատում՝ որե ուտում եյին։

Կյանքում Պետրոսը չեր հիշում, վոր հայրն իր համար վորեւ ընծա բերած լիներ։ Բայց ձմեռային արձակուրդներից առաջ վարժուհին կանչել եր Պետրոսի մորը, շատ եր գովել տղային և պատվիրել եր, վոր նրան տանը լավ պահեն, տաք կերակուր տան, լավ հազցնեն։

— Խելոք, աշխատասեր յերեխա յե, — ասել եր վարժուհին, — ընդունակ ու աչքաբաց ե, լավ մտրդ կդառնա, բայց նվազ ե, արյան պակասություն ունի, պիտի լավ մնունդ տալ, վոր չհիվանդանա։

— Քոռանամ յես, — ասել եր մայրը, — բա մենք խնայում ենք. բերաններից կտրում նրան ենք տալիս, վարժուհի ջան, բայց ինչ անես, գիտես ելի ժամանակը, քոռանա աղքատությունը, թողում ե, վոր աչք բաց անենք։

Յերբ այս բաները վարդուհին (Պետրոսի մայրը) պատմեց ամուսնուն, վերջինս ուրախու-

թյան ու տրտմության հուզմունքից արտասարեց։

Այդ որը (դեկտեմբերի 31-ին) գործի գնարուց առաջ Սիմոնը կնոջն ասել եր, վոր յերեկոյան Պետրոսի համար մի լավ ընծա յե բերելու։

— Շատ և զորիկ ե, ախար, յերեխեն, — առաջ Սիմոնը կնոջը, — եգուց ուրիշները լավ հագնըված, ուրախ զվարթ գուրս պիտի գան տանից, իսկ մեր խեղճ յերեխեն վիզը ծուռ պիտի մտիկ անի ուրիշներին ու նախանձից տանջվի։ Մի լավ քան եմ տեսել, պիտի առնեմ, ինչ տնենք, վոր նեղություն կքաշենք։

Սիմոնը պատվիրեց կնոջը, վոր Պետրոսին վոչինչ չատե, վորպեսզի յերեկոյան անակնկալ կերպով նրան ուրախացնի։ Մայրն այդպես ել մտադիր եր, բայց բանն ուրիշ տեսակ յեգագ։

Առավոտյան լողացնելու ժամանակ Պետրոսը չեր մտնում տաշտը տաք ջրից վախենալով և շարունակ գոռում եր։

— Զեմ ուզում, տաք ե, սառը ջուր լից մբան։

Մայրը յերեք թաս սառը ջուր լցրեց տաք կտիսայի մեջ, բայց յերբ այնտեղից թասով ջուր վերցրեց և մի քիչ Պետրոսի գլխին լցրեց,

Պետրոսը փաթէկացնելով վեր թռավ նստած տեղից, յերկու ձեռքով յերեսը ծածկեց ու աղաղակեց. «Չեմ ուզում, չեմ ուզում, տաք ե, երվեցի»:



Նա միաժամանակ սկսեց թռչկոտել տաշտի մեջ ու վուրերով հարպածել ջրին, վորով մորշորերը թրջեց ամբողջովին:

Այդ ժամանակ մայրը ել չհամբերեց ու բարկացած ասաց:

— Լավ, չես լողանում... յես ել հայրիկիդ կտուեմ, վոր քեզ ընծա չտա: Հայրիկիդ խոստացավ այս յերեկո քեզ համար ընծա բերել:

— Ի՞նչ, մայրիկ... ընծա... — աշխատեց լացը զողել Պետրոսը և նստեց տաշտի մեջ:

Այսուհետեւ վորքան մայրը ջուր եր լցնում նրա գլխին, նա տաշտից մի քիչ բարձրանում եր, «ՈՓ» եր անում ձեռքերն ամուր սեղմած գաղաթին, շրթունքները սեղմում եր, աչքերը խփում և աշխատում եր շունչն իրեն պահել ու ձայն չհանել:

— Մայրիկ, ինչ ընծա յե քե... ե... — խռորը կիսատ մնաց. մայրը շուռ տվեց տաք ջուր թասը նրա գլխին, և Պետրոսը բառի կեսը մի քանի կաթիլ ջրի հետ կուլ տալով, արագությամբ ձեռքերը տարավ գաղաթին:

## II

Այսուհետեւ ել Պետրոսը չհանգարտվեց: Ռեզամ եր անպատճառ իմանալ, թե հայրն ինչ եր տոնելու իր համար, Վազում եր մոր յետնից բակը, այսուեղ դրված մեծ տակառից դույլով ջուք վերցնելիս ինքն եր ծորակը բաց անում և ձեռքը ծորակի փականին դրած հարցնում եր.

— Մայրիկ ջան, մայրիկ, առա ելի, ի՞նչ ե  
սերելու...

— Ո՞ֆ, զլուխս տարաք չգիտեմ, յես ել  
չգիտեմ. քեզ բան ասելը կրակ ե, ելի:

— Հա, չգիտեմ,—թընզթընզացնում եղ Պետ-  
րոսը,—բա ինչո՞ւ թողի, վոր ենպես տաք ջրով  
զլուխս երես, հը... ասա, մայրիկ ջան, ասա.

Մայրն ստիպված յեղավ յերդվել, վոր հայ-  
րիկն իրեն ել չի ասել, թե ինչ ե առնելու:

Պետրոսը նրանից ձեռ վերցրեց և սկսեց իր  
սիրելի Զալիկի հետ խաղալ: վոր կես տարին  
հազիվ եր լրացրել:

Մի անգամ փողոցում խաղալիս Պետրոսը  
տեսավ պատի տակ կուչ յեկած մի շան ձագ.  
վերցրեց, թևի տակ դրեց ու տուն յեկավ: Այդ  
որից նրանք դարձան անբաժան ընկերներ:

Պետրոսը շատ ուրախ եր: Նա ուզեց իր ու-  
րախությանը մասնակից անել նաև Զալիկին: Նա  
չոքում եր հատակին, Զալիկը զալիս կանգնում  
եր նրա առաջ, զլուխը ծռում և նայում  
եր մատներին: Պետրոսը խաղացնում եր  
մատներն ողի մեջ, և Զալիկը յետենի վոտների  
վրա կանգնելով, դունչը մեկնած աշխատում եր  
նրա մատները բռնել: Այդ ժամանակ Պետրոսը  
հանկարծ վեր եր թոշում ու սկսում եր վազել:  
Զալիկն ել վազում եր նրա շետերց, գնդակի պես  
գորգում եր նրա վոտների արանքում, ընկնում

եր մեջքի վրա ու նրա վարտիքի փողքը կամ հա-  
գուստի փեշն ատամների մեջ առած, քաշքում  
եր: Պետրոսը հանկարծ ծափ տալով նրա դնչի  
մոտ, հագուստն ազատում եր ու վազում...

— Զալիկ ջան, եսոր հայրիկն ինձ համար  
ընծայեց առնելու, զիտե՞ս, — ասաց Պետրոսը, նո-  
րից վազեց խոհանոց ու հարցըեց մորը.

— Մայրիկ, բա Զալիկի համար վզի շղթա  
չի առնելու հայրիկը: Ասոմենց շունն ենպես լավ  
շղթա ունի ..

— Մյուս տարի, զավակս, — պատասխանեց  
մայրը, ունելիով ոջախից կրակ լցնելով հարթու-  
կի մեջ:

— Խեղճ Զալիկ, — ասաց Պետրոսը և շուռ յե-  
կավ դուրս գնալու: բայց շեմքի մոտ կանգնեց,  
կարծես մի բան մտաբերեց և նորից յետ դառ-  
նալով, ասաց.

— Մայրիկ, յես ուրիշ բան չեմ ուզում. թող  
հայրիկն ինձ համար «Եռնն ու կատուն» առնի:

— Ինչ շուն ու կատու, Զալիկդ հերիք չի, —  
պատասխանեց մայրը կրակը փշելով:

— Հա, հա, հա...քրքջաց Պետրոսը, — «Եռնն  
ու կատուն» զիրք ե, մայրիկ, զիրք, չգիտե՞ս:

Եեվ նա հպարտությամբ սկսեց բացատրել,  
ձեռքերով ողի մեջ ցույց տալով:

— «Եռնն ու կատուն»... այ, եսքան գիրք

ե, կապույտ տառերով տպած, վրան նկարած է կարմիր կատուն, գյուղից յեկած մեր քեռու նման ըստքը հագին, յերկար շիբուխն ել բերանը դրած ենավես լավ պատմություն ե, մայրիկ, վոր կարդաս, ծիծաղից կթուլանաս. կատուն ասում ե «միառւ, միառւ», շունն ել՝ «հաֆ, հաֆ». շունը մորթուց քաշում ե, իսկ կատուն փրշտացնում... Անցյալ որը մեզ համար որիորդ ձեռադործը կարդաց, ծիծաղից ուշիներս գնաց. ով ե զրել մոռացա... որիորդն ասած... հեղինակը, հա, հեղինակն ե զրել ազգանունն ել ասաց... Իմ զույգն առնի Գագիկը, նրա համար հայրն ե զնել. ասացի՝ տնկր, մի որ տանեմ տուն կարդամ՝ ելի բերեմ, չտվեց:

— Քեզ համար ավելի լավ կբերի հայրիկ, — ասաց մայրը չաղացած հարթուկը վերցնելով:

— Չեմ ուզում, չեմ ուզում, թող «Շունն ու կատուն» առնի, — աղազակեց Պետրոսը:

Յերբ նստեցին ճաշի մայր ու զավակ, վոսպե շորվան ուտելիս հանկարծ Պետրոսը գդալը ցած զրեց և կանգնեց վոտքի. «Չեմ ուզում, մայրիկ, յես կզնամ, հայրիկին կասեմ, վոր ինձ համար Շունն ու կատուն» առնի:

Խչքան մայրն աշխատեց համոզել Պետրոսին, վոր հայրն ավելի լավ բան է բերելու, նա չիամոզ-

վեց և պատրաստվում եր լաց լիներ ուստի մայրը նրան չզրկելու համար ասաց.

— Լավ, գնա ասա՝ թող «Շունն ու կատուն» առնի, բայց իր խոսուցած ընծան ել հետք բերի: Հա, աղ չունենք, ասա, թող աղ ել առնի:

— Ի՞նչ, մայրիկ ջան. յերկու ընծան... Զեռքերը միմյանց խփելով թոշկուում եր Պետրոսը, և նրա յետեսից ուրախաձայն հաջոցով վազվզում եր Զայրիկը:

— Մայրիկ, Զալիկին ել հետա տանեմ:

— Ի՞նչ, — կարծես խորը մտածմունքից ոթափակելով ասաց մայրը. — չե, Պետիկ ջան, մի գնա, ախար լսղացել ես, կմրսես, կաց, իրիկուն հայրիկդ ինչվոր բերելու յե, կբերի, յետո կասեմ, քո ուզած բանն ել կառնի:

Պետրոսը ըուպեապես կանգնեց քարացած և րունցքը դնելով աջ աչքին, սկսեց բարձրաձայն ազգալ ու աչքերը արորել: Զալիկին ել կանգնեց ապշած, զբար ծոեց ու գունչը ցցելով, աչքերը հառեց Պետրոսի յերեսին:

— Հա, ինչի՞ պիտի մրսեմ. այ, հայրիկի բաշլուդն ենտեղ ե, կփաթաթվեմ, ձեռաց կզնամ ու կգամ:

Մայրը ել բան չկարողացավ ասել: Լուս հոգ հանեց, ապա նայելով Պետրոսի այսերից:

ՎՈՎ-ՎԼՈՎ Թափփող արցունքի կաթիլներին ։  
Չալիկի վեր ցցած դնչին, ասաց.

— Դե լավ, գնա, խենթուկ, մորդ չեսլում...  
գնա, շուտ արի, չուշանաս. արդեն մթնում ե,  
իրան ել ասա, թող հետդ դա:

Մի քանի ըոպեյից հետո Պետրոսը Չալիկի  
հետ տանից գուրու յելավ: Նրանց բնակարանը,  
վոր, մի յերկնարկանի խարխլած տան ներքին  
հարկումն եր, գտնվում եր քաղաքածայրում  
իրար վրա թափփած, անկանոն դասավորված  
տների շրջանում: Փողոցներն այստեղ նեղ եյին,  
սաստիկ, այնպես վոր անցնողը ձեռքերը պար-  
զելիս յերկու կողմից կացնում եր հանդիպակաց  
ոլատերին:

Պետրոսը Չալիկի հետ անցավ այս բազմա-  
թիվ ծուռ ու մուռ, իրար կտրատող, սառած  
ցեխակույտերով ծածկված փողոցներով ու դի-  
մեց դեպի քաղաքի կենտրոնը տանող մերկար  
փողոցը:

III

Բաշուկը գլխարկի ու ականջների վրայից,  
անցկացրած և ամուր փաթաթած վզին, ձեռքերը  
խրած անսատառ, կարճ՝ մինչև ծնկները հազիվ  
հասնող վերարկուի գրպանները, Պետրոսը Չա-  
լիկի հետ անցնում եր փողոցից փողոց: Յերր

շուկայից անցնելով մտավ հետեւյալ լայն փողո-  
ցը, զարմանքը բռնեց նրան: Այդքան մարդ նա-  
յերբեք չեր տեսել փողոցում: Մայթերն ամ-  
բողջովին ծածկված եյին մարդկանցով, վորոնք  
միմյանց հրելով, շտապ-շտապ անց ու դարձ եյին  
անում: Բոլորը կարծես վազում եյին, և Պետ-  
րոսն ել նրանց հետ վոտքերին ուժ եր տալիս,  
յերբեմն-յերբեմն աչքը գցելով Չալիկին, վոր չը  
կորցնի: Չալիկը մեկ առաջ եր վազում ականջ-  
ները ցցած, մեկ, մոտենում եր խանութների  
դռներին ու հեռագրասյուներին, կանգնում, հո-  
տոտում եր, մեկ յետ եր մնում, ապա պոչը  
շարժելով վազում, համսում եր Պետրոսին ու  
դունչը կամ պոչը քսելով նրա ծնկներին, առաջ  
եր վագում: Կառքերն ու սահնակները ոլանում  
եյին, սառցի փշուրներ շպրտելով այս ու այն  
կողմը, կամ բաց գետնի հանդիպելով, դղրդաց-  
նում եյին. ձիաքարշի ձիերը չափ ընկած վա-  
զում եյին. մշակները ահապին կողովներ ու զամ-  
բյուզներ շալակած լի սթերքներով, անցնում  
եյին մայթերի կողքով: Փողոցում ծառ չկար արն-  
կած, բայց Պետրոսին թվաց, թե նոր ծառեր են  
մսել, վորոնք սակայն շարժում եյին:

«Հա, զբանք տոնածառեր են»; գլխի ընկավ  
Պետրոսը: Նա մտնում եր մարդկանց արանք-

ները, ամհետանում եր մի քանի րոպէ և նորից  
եր յերեւում:

— Չալիկ, կանչում եր նա հաճախ, իսկ Չալիկը  
վագում եր լեզուն դուրս ձգած և յերբեմն՝ յեր-  
բեմն վատքի տակ ընկնելով, վնասում եր:

Լայն փողոցն անցան. մտան մի ուրիշ փողոց,  
այգաեզից ել ծովեցին և գուրս յեկան քառակուսի  
մեծ հրապարակը, վորից մի քիչ հեռու գտնվում եր  
ծովափ աանող փողոցը. իսկ ծովափին, պարտեզի  
գուան մուռ նստած եր հայրը և կոշիկներ եր մաք-  
րում ու կրկնակոշիկները կարկատում:

— Վայ, Չալիկ ջան, մրսում ե... — ասաց Պետ-  
րոսը, նայելով գողացող շնիկին և գրկեց, զրեց  
թեի տակ, «վոշինչ, նիմա կզնանք, հայրիկը  
«Ծունն ու կատուն» կտոնի, կմերքադառնանք ու  
կտաքանառ, աղ ել պիտի առնիք. Ու կարծես նը-  
րան միսիթարելու համար ավելացրեց.

— Գիտես, Չալիկ ջան, ենտեղ քո պատկերն ել  
կտնկարած. ենակես լտի են նկարել, վոր իսկ քեզ  
նման եօ և հանկարծ մի գյուտ արածի պես գոչեց  
ուրախ և աւրախ. «Թումանյան Թումանյան...  
Չալիկ ջան, Թումանյանն ե գրել եղ գիրքը, այ...»  
Յեւ նա առաջ գնաց, այդ ազգանունը մի քանի  
անգամ կրկնելով, վոր չմոռանանա և հորն ասի:

Յերկինքն արդեն սկսել եր մինել. Ճրագներն  
սկսել եյին նվազ լույս առածել իրենց շուրջը:

Հրապարակի աջ կողմից հանկարծ Պետրոսի աշ-  
քերին ընկալ մի շքեղ, պայծառ լույս. Նա քայ-  
երն ուղղեց լույսի կողմը:

Պետրոսի աշքերի առջև նկարվեց մի հիանա-  
լի պատկեր: Մեծ ապակու յետեր, խանութի  
ցուցափեղկի վրա փոված եր սպիտակ-մաքուր  
քամբակ, վորի վրա ձյան բյուրեղների նման ինչ վոր  
բաներ եյին պապում: Ցուցափեղկի ուղիղ կենտ-  
րոնում կանգնած եր անշարժ մի յերկարանասակ  
ծերունի՝ սպիտակ, յերկար մորուքով, վոր հաս-  
նում եր մինչև կուկատեղը: Աւսքերն ու ընչացք-  
ները նունյակս սպիտակ եյին: Գլխարկի տա-  
կից, քունքերի վրա ալիքաձեւ իջում եյին բամ-  
քական մազերը:

Ծերունին հագել եր ալ կարմիր վերարկու,  
վորի հետ, ծոծրակի վրա, միացած եր կոնաձև  
գլխարկը՝ նույնպես կարմիր: Գլխարկի բոլորքը,  
վերարկուի ոձիքը, թեւերն ու փեշերը յեղերգած  
եյին զառան սպիտակ, գանգուր մորթու լայն  
շերսովի Ծերունին աջ ձեռքը բարձրացրած  
գլխի վրա, ամուր բռնել եր յեղենու մի մեծ  
ճյուղ, վորը զարդարված եր գույնզգույն թեր-  
թիկներով և կարմիր, կապույտ, կանաչ, սպի-  
տակ, դեղին մոմիկներով: Չախ ձեռքը առաջ  
եր պարզել զեպի ապակին, և բազկից կախված  
եյին կարմիր, գեղին, կապույտ թղթե զամրյուղ-

ներ, վորոնց մեջ զրված եյին վուկեգույն ու  
արծաթազոծ ընկույզներ։ Ռւսերից կախված եյին



դառ, ուր, չնիկ, իսկ գոտկից կախ եր ընկած  
մի յերկար թուր։ Ծերունին անշարժ աչքերը  
հառել եր Պետրոսի վրա, վոր հափշտակված դի-  
տում եր նրան։

— Զալիկ ջան, տես, Զմեռապապին ե,—  
ասց Պետրոսը, շան զլուխը թիկ տակից առաջ  
քաշելով և մատը տանելով դեպի ապակին։

Զալիկն ուժեղ լույսից աչքերը ճպճպացրեց  
բուռխը ցնցելով, ապա գունչը մեկնած սկսեց նա-  
յել ցուցափեղկի վրա գարսած իրերին։ Ծերունու  
շուրջը գտնվում եյին բազմաթիվ կենդանիներ։  
Մի խումբ չներ գայլի յետեկց ընկած կարծես վա-  
զում եյին։ Այ կողմուտ կանգնած եր մի հոկա  
փիդ՝ կնճիթը վեր ցցած, վորից կախ եր ընկել  
զամբյուղի մեջ նստած մի փոքրիկ շիկահեր աղ-  
ջիկ։ մի ուրիշ զամբյուղի մեջ պազել եր մի  
փոքրիկ կապիկ ծաղրական զնչով։ Փղի կողքին  
մի շուն եր կանգնած յերկար ականջներով ու  
լայն զնչով, վոր կարծես ուղում եր Զալիկի վրա  
հարձակվել։

Ծերունու մյուս կողմում խառնիխուռն շար-  
ված եյին վոչխարներ իրենց հովիմներով ու զամ-  
փրոներով և ելի ուրիշ շատ կենդանիներ, զա-  
զաններ, թուշուններ, վորոնց առաջին անգամն  
եր տեսնում Պետրոսը։

Պետրոսը յերաշում մատուցած բերանը բաց նա-  
և նույսուցուց ՀԱԽ-ԸՆԹԱՑ ՀԱՅ-ԸՆԹԱՑ  
ՀԱՅ-ԸՆԹԱՑ ՀԱՅ-ԸՆԹԱՑ

յում եր ու հիանում այս տեսարանով։ Հանկարծ նրա քիթն ու շրթունքները դիպան պաղ ապակուն և նա ցնցված յետ քաշվեց վախելով։ Յերբ յետ նայեց, տեսավ արդեն մթնել ե։

— Գնանք, Զալիկ ջան, ուշ ե արգեն, — ասաց Պետրոսը սեղմելով շնիկին թևի տակ ու հեռացավ ցուցափեղկից, միտքը չհեռացնելով կախարդական ծերունու պատկերից։

#### IV

Յերբ զուրս յեկավ ծովափ, քայլերն արագացրեց։ Ահա մի քանի քայլ ել՝ և հորը կտեսնի ու միասին կդնան ընծաներն առնելու։

Գնաց, գնաց Պետրոսն ու ապշած կանգնեց… Այս տեղը, վորտեղ նստած եր լինում հայրը, զատարկ եր։ Յերկյուղով բռնված՝ անվստահ հայացքով դիտեղ չորս կողմը, պարտեզի դռնից ներս նայեց… հայրը չկար – իր պարագաներն հավաքած գնացել եր։ Յետ գարձավ հուզված ու շփոթված և չնկատելով իրեն ծանոթ հրապարակը տանող փողոցը, առաջ անցավ ու մտավ իրեն բոլորովին անծանոթ մի փողոց։

Մտքի հետ ընկած նա բավական առաջ եր գնացել և մի յերկու փողոց ել ծովել եր, յերբ նրա մարմնով մի գող անցավ։ Բոլորովին մութն եր. անց ու դարձ անողները սակավացել եյին.

ավելի շատ կառքեր եյին անցնում, քան մարդկիկ։

Պետրոսը մի գաղտնի սարսուռ զգալով, քայլերն շտապեցրեց. բայց շանի առաջ եր զնում, այնքան փողոցները նրան անծանոթ եյին թվում։ Յետ նայեց – հեռվում։ Նոր տեղալ սկսող ձյան փաթշների արանքներից պսպղում եյին լապտերները։ Աջ ու ձախ նայեց – խանութներն արգեն փակ եյին և տեղ-տեղ միայն փակվող դռան զրնդոց եր լսվում։ Նա չգիտեր՝ վոր կողմը զնա։ Կանգնեց, մի քիչ մտածեց. ուղում եր հարցնել, բայց փողոցում վոչ վոք չերեաց։ Քիչ առաջ գնաց և տղաթեած (կծկված) թաղապահին նկատելով, անվստահորեն մոտեցավ ու հարցրեց իրենց փողոցը։

— Ի՞նչ ես ես ուշ գիշերին թափառում, հիմար, – ասաց թաղականը սրթսրթացնելով, – մտիկ ե, շուն ել ե զրկել… շատ հեռու յե ձեր փողոցը. այ եղան գնա, հետո ծովիր դեպի աջ, ելի աջ, ապա ուղիղ, հետո ձախ, ելի ուղիղ և մեծ արձանի մոտից ծովիր դեպի աջ ու կը մտնես ձեր թաղը…

— Աջ, ձախ, ուղիղ, հետո աջ, նորից ձախկրկնելով ու դողալով վազում եր Պետրոսը, շանը ամուր սեղմած թևի տակ։

Քանի փողոց անցավ, վորքան ժամանակ գլուխաց Պետրոսը, ինքն ել չիմացավ։ Միայն յերբ մի նեղ փողոցում կանգնեց ու շուրջը նայեց՝ սարսափեց—վոչ վոք չկար, բոլորովին մութն եր։ Իրարից հեռու կախված լապտերների աղոտ լույսերը միմյանց չելին հասնում և նրանց արանքներում ձգված տարածությունները թաղված ելին խավարի մեջ։ Քամին հետզհետե զորեղանում եր և ձյան հատիկները շպրտում նրա յերեսին։ Պետրոսը ծնոտը բարձրացրեց, բաշուղը տակից քաշեց և մինչև քիթը ծածկեց Նա չգիտեր, վոր կողմը գնար։ Շունը թեփ տակին, կանգնեց փողոցի մեջտեղը, յերկու կողմից փողոցի յերկարությամբ նայելով, քաշվեց պատի տակ և սպասեց, վոր գուցե մի անցորդ պատահի և իրեն ցույց տա ճանապարհը։

Տաս ըոսկե հազիվ եր անցել, վոր նա ձյան վրա ճոճուացող վոտնաձայն լսեց և սիրտ առած պատից հեռացավ։ Մի ակնոցավոր պարոն եր, վոր զուխը վերաբերուի մորթեպատ վզի մեջ փաթաթած շտապ-շտապ անցնում եր։

— Հորեղբայր, հորեղբայր, մեր տունը վիր կողմն ե...»

— ԿТО?—հարցրեց անծանոթը յետ նայելով, բայց բայերը չդանդաղեցնելով։

— Կոշիկ սրբող Սիմոնի տունը վիրատեղ ե, — ինչ կոշիկ սրբող, ինչ Սիմոն, — հարցրեց նա դժկամությամբ և շարունակեց ճանապարհը։  
— Զադրովի փողոց. այ, Զադրովի... մեր տունն են կողմն ե, — ասում եր Պետրոսն անծանոթի յետեկց վագելով։ Իսկ անծանոթը չհասկանալով նրա խոսքերը, չլսելով անգամ նրան, շուռ յեկավ հանկարծ, արագությամբ մի բան խոթեց նրա բուռը և ինչպո՞ր մըմուալով քթի տակ, պոկվեց նրանից ու համարյա փախավ։

Պետրոսը կանգնեց, հառաչեց, շոշափեց բըռան մեջ գրված կլոր բանը, վոր սկ գրամ պետք ե լիներ և արագությամբ դեն շպրտելով, Զալիկին սեղմած, անծանոթի յետեկց սկսեց վագել։ Շուտով նա ել կորավ Պետրոսի աշքերից։

Պետրոսը հասնելով փողոցի անկյունին, մի փակված նկուղի գուռ նկատեց, վորի յերկու կողմերում յերկաթյա վանդակապատներ կույին։ Նա ամբողջ մնարմնով դողում եր. զգաց սաստիկ հոգնածություն ու նստեց ձյունապատ մայթի վրա։ Վորքան կուզեր այժմ տանը լինել, թիթեղյա վառարանի կողքին։ Հայրը, ով գիտե, այժմ իր ընծան առած տուն ե յեկել և սպասում ե իրեն։ «Շունն ու կատուն» բերած չի լինի, բայց վոչինչ, վաղն ել կարող ե առնել. մյուս որը Գագիկին ցույց կտա։ Հեղինակի ա-

նունն ել գիտե, ել չի մոռանա... Յեվ նա կարծես զղաց, վոր մոըը շսեց, տանից դուրս յեկավ... Ու լուռ արտասվեց, Զալիկին դոգը դնելով և ձեռքերը վերաբերուի հակառակ թևերի մեջ անցկացնելով։

Ջունը տեղում եր առատությամբ։ Նրա ծնկներն արդեն ծածկվեցին ձյունով։ Նա սկսեց սրթսրթացնել, ատամները չխէչխկացնել միմյանց։ Զալիկին ել անհանգտացավ և նրա գոգից դուրս թռչելով, դունչը վեր ցցեց, մի քանի անգամ հաջեց, ողի մեջ հոտոտելով պոչն իրեն սեղմեց և վագեց Պետրոսի մոտ։

Մի կառք անցավ։ Պետրոսն սթափվեց, ուզեց վոտքի յենել։ Զալիկը հաջելով ու կոնձկոնձալով վազեց կառքի յետեից, բայց կառքն անցավ արշավակի և Պետրոսը մնաց նստած։ Դարձյալ շատ կառքեր անցան, վորոնց ծածկոցները, կառավանների շորերն ու գլխարկները և ձիերի բաշերն ամբողջովին սպիտակել եյին։ Այդ բոլորը տեսնում եր Պետրոսը կարծես յերազի մեջ և նրան թվում եր, թե Զմեռ-Պապին ե անցնում սահնակով։

Քաղաքային ժամացույցը խփեց 12 անգամ։ Պետրոսը չլսեց այդ ձայնը. բայց մի ուրիշ, ազելի բարձր, մի քանի անգամ կրկնվող ձայն նըրան խմացրեց, վոր մարդիկ դեռ արթուն են։

Զիմացավ ի՞նչ ձայն եր այդ. կարծես յերկնքից ահագին թափով քարեր եյին գլորվում ցած։

Թնդանոթի հարվածներով յերջանիկ մարդիկ դիմավորում եյին նոր տարուն։

Պետրոսը կիսով չափ թաղված եր ձյան մեջ, վոր քամին հավաքում եր նրա շուրջը։ Իսկ Զալիկը աղիողորմ ձայնով հաջում եր և այս ու այն կողմը վազվում։

Պետրոսը շատ նայեց և նայելուց հոգնած աչքերը փակեց։ Նրա առջևով մի մարդ անգավ, վորին Պետրոսը չտեսավ։ Մարդը ինչ-վոր մի ձայն լսեց, նայեց այն կողմը, վատքով խփեց իր յետեից վազող Զալիկին և բարկացած ասաց.

— Անամոթներ. . գիշերվա կեսին ել մարդու հանգիստ չեն տալիս... Յեվ ինչու վոստիկաններն այս աներես մուրացկաններին չեն վըսընդում. չե վոր բարեգործական ընկերություններ կան։

Ու շարունակեց իր ճամբան։

Պետրոսը քնած եր, թե արթուն, ինքն ել չիմացավ, միայն զգաց, վոր տեղը շատ տաք ե, բայց յերեսին սառը յերկաթի պես մի բան են կպցըել։

Զալիկը հանկարծ հեռացավ նրանից, կանգնեց փողոցի մեջտեղը, ականջները խլեց, դունչը ցցեց, հոտոտեց և ապա կարծես մի բան վըճ-

ռելով, արագությամբ սկսեց վազել փողոցի յերկարությամբ։ Պետրոսը մնաց մենակ սառնամանիքի մեջ, իսկ Զալիկը, կարծես զգալով, վոր իր սիրելի ընկերոջը մեծ փորձանք ե սպասում, չափ ընկած թռավ դեպի տան կողմը։ Պետրոսի հորին խմացնելու դժբախտությունը։

Յեթե Պետրոսի ուշքը վրան լիներ ու հասկանար Զալիկի միտքը, վեր կկենար ու նրա յետնից կվազեր։

Բայց փոչինչ՝ Զալիկը առանց Պետրոսի ել կդնա, կգտնի իրենց տունը և մի կես ժամից հետո Սիմոնին կրերի ու կլանդնեցնի վորդու մոտ։ Զալիկը դունչը ցցած վազում եր...

## VI

Նոր տարուն դիմավորելուց հետո քաղաքացին ակումբից շատերը դուրս յեկան և դեպի տուն շտապեցին։ Մի քանիսի ճամբան այդ կողմից եր։ Նրանցից վոմանք Պետրոսին նկատեցին խալարի մեջ, բայց ուշադրություն չդարձնելով անցան։

— Ինչ ցուրտ ե, կառք ել չնստեցինք, — ասաց մի լայնիրան գեր կի՞ն՝ թանկագին դեղին մորթուց կարած բռան սեղմելով կրծքին։

— Քսան քայլի համար ի՞նչ կառք. եսպես լավ ե, քիչ կթարմանանք, — ասաց նրա հետ գը-

նացող ցիլինդրավոր մարդը՝ ամուսինը և ձեռքն անցկացրեց կնոջ ձախ թևի տակ։ Նրանք զեռ հեռու եյին Պետրոսից, յերբ Զալիկը վազելիս խոսակցության ձայն լավով, կանգնեց մեխված, զլուխը շուռ տվեց, անվստահ մոտեցավ նրանց և պոչը շարժելով, փաթաթվեց տիկնոջ վոտքերին ու փեշը ըռնեց։

— Այս վնրտեղից եր, — գոչեց կինը զարմացած, — կորիր։

Այդ ժամանակ Զալիկը նրա յերկար փեշը թողեց և վոստոստերով վազեց մինչև անկյունը, կանգնեց Պետրոսի մոտ, սպասեց նրանց գալուն, և յերբ նրանք մոտեցան, պոչը շարժելով ու զլուխը թափահարելով սկսեց կոնձկոնձալ ու հաջել, կարծես հրավիրելով նրանց։

— Ի՞նչ կա այնտեղ, — հարցըց տիկինը։

— Ո՛վ գիտե, — անհոգությամբ պատասխանեց ամուսինը. և յերբ հասան վանդակապատին, ավելացրեց։

— Մուրացկան ե. ի՞նչպես են դիմանում այս ցըրտին անպիտանները, — ու կնոջ թևից քաշեց։ Տիկնոջ գութը շարժվեց կարծես. նա չուզեց իր ամուսնու պես քարասիրտ յերևալ։ Նա մոտեցավ Պետրոսին, նայեց նրա շրթունքներին, վորտեղից անորոշ բառեր եյին դուրս գալիս։

— Խեղճ, — ասաց տիկինը նայելով ամուս-

նուն, և կուանալով, փեշի ծալքից հանեց պորտմանեն. մատների մեջ շոշափելով մի դրամ հանեց այնտեղից և կոխեց Գետրոսի վերարկութեկի մեջ:

— Թու... Թու... մա...ա...ա...նյա...ան, — զառանցում եր Պետրոսը, վորից նրանք բան չըհասկացան:

— Գնանք, ցուրտ ե, գրանց վոր ուշադրություն դարձնես՝ հազարներով են. գնանք, — շտապեցրեց ամուսինը:

Յեվ նրանք հեռացան:

Այդ ժամանակ Զալիկին մի չտեսնված բան պատահեց: Յեթե Պետրոսի ուշը վրան լիներ և տեսներ, նա յել սաստիկ պիտի զարմանար: Զալիկը վագեց, կանգնեց անցորդների առաջը և մի աղիողորմ մշտառոց արձակեց: Անցորդներն ուշը չդարձրին: Զալիկը յետ դարձավ, հոտոտեց Պետրոսին, փոթկացրեց ու նորից ընկավ նրանց յետեր, և հասնելով, բռնեց տիկնոջ փեշից ու ամուր սկսեց քաշել: Կինը նրա բերանից խլեց փեշը, և նրանք ծովելով մյուս փողոցը, կանգ առան մեծ, զարդարուն դռան առաջ: Զալիկը մտավ նրանց արանքը և աչքերը հատելով կնոջ զարմացած դեմքին, փաթաթվեց նրա գոտներին, սկսեց լիզել, մշտառալ, նորից փաթաթվեց, նորից փեշը բռնեց...

— Խեղճ շնիկ, մըսում ե, — ասաց տիկինը, մատը դնելով ելեկտրական զանգի կոճակին. — ինչքան ել լավ շուն ե տեսնես ումն ե ով գիտե տերը վոստիկանատներն ընկած փնտում ե. կմըսի՝ կստոկի, մեղք ե: Յեվ կուանալով, ձեռքը տարավ նրա մեջքին: Շնիկը ձայնը կտրեց, պոչը շարժեց և գլուխը ծռելով նրան նայեց:

— Խեղճ, — ասաց տիկինը, գրկեց նրան ուրացված դռնից ներս մտավ: — Այս լավ յեղավ, — ավելացրեց նա, զառնալով ամուսնուն, — վաղուց փնտում եյի այսպիսի մի սիրուն շնիկ:

Սակայն Զալիկը մի սրտակտուր ձայն արձակեց նայելով փակվող դռանը և ճիգ արավ տիկնոջ թեփ տակից դուրս պրծնելու:

— Մըսել ե, մըսել և խեղճը, և սոված ե, — ասաց տիկինը սանդուխքով վեր յենելով և ձեռքը նրա վզին քսելով...

## VII

Տիկինը կաթի մեջ շաքար գցեց, խառնեց ու վրեց Զալիկի առաջը: Զալիկը չմոտեցավ կաթին և վոչ ել հնդկահավի խորոված կտորին, վոր գըրված եր կաթի պնակի մոտ: Նա վագեց դռան մոտ ու սկսեց չանգուել դուռը:

— Տար խոհանոց, բարձը դիր վառարանի առաջը և շնիկին պառկեցրու վրան, — հրամայեց

ամիկինը ծառային, — մրսել ե, մեղք ե, շատ լավ շուն ե, ազնիվ ցեղից ե յերևում... վաղը կլողացնես սապոնով, կսանրես, լավ կմաքրես:

Սակայն Զալիկը ամբողջ գիշեր չքննեց և դուռը չանգուելուց հոգնած գնաց, կծկվեց պատի տակ հատակի վրա, ու լուս նայում եր հատակին, կարծես խորասուզված մտքերի մեջ:

Առավոտյան վաղ սանդուխքի աստիճանները սրբելիս, յերբ ծառան դրսի դուռը բաց արավ, հանկարծ նրա ծնկներին հարվածելով, դուրս թըռավ Զալիկը մի կատաղի վոստյունով: Ծառան սարսափած յեկավ հայտնեց ախկնոջը, վոր ազնը վացեղ շնիկը դուրս ե փախել:

Տիկինն այդ անզգուշության համար ծառային զրկեց նոր տարվա իր խոստացած նվերից:

Առավոտյան անցորդները միմյանց «բարի կաղանդ» մաղթելիս պայծառ արեկի տակ, պսպղուն ձյունի մեջ տեսան մի ուշաթափ մանուկ, կծկված նկուղի դուանը:

Յերբ նրա շուրջը հավաքված մարդկանցից մեկը գեն եր անում Պետրոսի շուրջը հավաքված ձյունը, հանկարծ մի չալ շուն փրփրած բերանով, կատաղի հաջոցով վրա պրծավ և ամուր կծոտեց նրա ձեռքերը: Նա սարսափահար յետքաշվեց: Ապա շունը նայեց մյուս մարդկանց և

մեկ-մեկ բոլորի վրա հարձակվեց, ծվատելով վոմանց վարտիկները:

Կատաղած ե, հեռու գնացեք, — ձայն տըռվեց մեկը և փախավ:

Մյուսները հետևեցին նրան:

Իսկ Զալիկը մոտեցավ Պետրոսին, նայեց նըրան բութ հայացքով, մոռւթով ձյունը նրա ծընկներից ու վոտքերից հեռացրեց, լիզեց նրա վոտքերը, առջիկ ծնկների վրա չոքեց, դունչը յերկարացրեց, յերեսը քսեց նրա սառած ձեռքերին, լիզեց մի քանի անգամ ձեռքերը ..

Ապա վեր թռավ Զալիկը, վազեց գեպի տուն Պետրոսի հայրիկին կանչելու:

### VIII

Այդ որը սովորականից շուտ հավաքեց Սիմոնը իր պարագաները և տուն շտապեց:

Նրա համար այդ որը վոչ մի բանով չեր տարբերվում մյուս՝ սովորական որերից: Մարդիկ ծանրաբեռնված զամբյուղներով, կողովներով, կապոցներով շարունակում եյին մթերքներ ու զանազան իրեր կրել գեպի տուն վազը նորատարուն գիմավորելու համար: Իսկ Սիմոնը սովորականի պես մտավ փուռը հաց վերցնելու և ապա յերկու ֆունտ լոբի առավ վաղվա ճաշի համար:

Բայց Սիմոնը գնում եր տուն ուրախ տրամադրությամբ։ Պետրոսի համար գնած կաշվե պայուսակը գոգնոցի մեջ փաթաթած դրել եր կոնատակը և ամեն անգամ քաղցր հաճույք եր զգում, յերբ շոշափում եր պայուսակը։

Դեռ առավոտն եր առել պայուսակը։ Սա եր այն նվերը, վոր նա մտադրվել եր առնել Պետրոսի համար, վորովհետեւ Պետրոսը քանի անգամ թախծով գանգատվել եր, թե շատերը կաշվե պայուսակը մեջքներին կապած ազատ ձեռքերով գնում են դպրոց ու տուն գառնում, իսկ իր տետրակներն ու գրքերը շորից կարած պայուսակի մեջ, կոնատակին ծալծվում, թրջվում ու փչանում են։

Յերկու ոռուբլի 80 կոպեկ եր տվել։ Համարյա չորս որվա ապրուստի գին եր. բայց Սիմոնը չեր ափսոսում—դա ել ամհրաժեշտ եր։

Յեկ նրա առաջ գծվում եր այն հմայիչ պատկերը, յերբ ինքը գոգնոցն արձակելով, բաց կանի պայուսակը, Պետրոսը ցնծագին աղաղակներով վրա կալբճնի ու իր ձեռքից կթոցնի այն։

Սիմոնը վոգեռված այս պատկերից, ուզեց Պետրոսի ուրախությունը կատարյալ անել։ Քիչ տատանվելուց հետո 20 կոպ. յել կանֆետ առավ։

— «Թող բերանն ել քաղցրացնի», — մտա-

ծեց նա։ — Հապա Վարդուհին վորքան կուրախանա, տեսնելով զավակի հրճվանքը։

Այսպիսի ուրախ մտապատկերներով նա տան գուռը բաց արավ…

## IX

Յերբ Սիմոնը ներս մտավ պարագաներն ուսով գցած, ու գլխարկը հանելով սկսեց ձյունը թափ տալ, սաստիկ զարմացավ կնոջ հարցից, թե՝ «հապա Պետրոսն ուր ե»։

Գոգնոցի մեջ փաթաթած պայուսակը դրեց սեղանին, ապա պարագաները գետին շպրտելով, հարցը բախեցած։

— Ինչի՞ ուր ե գնացել Պետրոսը։

— Պետրոսը յեկավ քեզ մոտ, — ասաց Վարդուհին ու շփոթված պատմեց ամուսնուն յեղելությունը։

— Վճնց թողիր աղին... ինչի՞ թողիր... նա ինձ մոտ չի յեկել. ով զիտե՛ ճամբան կորցրել, մոլորվել ե։

Մի պահ շվար կանգնած, մտքով տարվեց Սիմոնը, ապա նստեց թախտին, նայեց զունը ցավագին հայացքով ու կուչ յեկավ հոգնածությունից։

Ամբողջ որը դուրսը նստած, ցրտից մըստմստացող մատներով աշխատելուց սաստիկ հոգ-

նած, սոված, նա մոռացել եր քաղցն ել, հոգնածությունն ել այն զրավիչ պատկերների հանգեալ վոր գծում եր իր ներսում տուն գալիս: Այժմ այդ պատկերները չքացան միանգամից, նա լնկճվեց և մարմնի մեջ ցավեր զգաց:

— Ո՞ւր նստեցիր, Սիմոն,—աղաղակեց Վարդուհին, գնա, տես, ուր մոլորվեց յերեխան:

Զի մոլորվի, շունը հետն ե,— ասաց Սիմոնը, ինքն ել կարծեն չհավատալով իր ասածին. վեր կացավ, շտապով գլխարկը խրեց զրուխը ու դուրս յելավ:

Ամբողջ գիշերը թափառեց ու վաղվղեց Սիմոնը այս փողոցից այն փողոց, գնաց իր աշխատանքի տեղը, գիտեց շրջակա նրբափողցների անկյունները, անցավ վոստիկանատնից վոստիկանատուն, իր ծանոթների ու բարեկամների դըռները բաղիւեց, հարցըրեց Պետրոսին — վոչ մի տեղեկություն չստացավ: Մի քանի անգամ յետ դարձավ տուն իմանալու՝ թե արդյոք տուն չի դարձել, ու նորից գնաց վնասուելու:

Ամբողջ մարմնով ջարդված, հուսահատված, վերադարձավ Սիմոնը առավոտյան դեմ տուն, կնոջ հետ սգալու վորդու կորուսար. բայց զեռես փոքրիկ հույս ուներ, թե գուցե տուն յեկած լինի վորդին:

X

Սրգեն լույսը բացվել եր, յերբ նա մոտեցավ իրենց տանը: Դուռը բաց եր, Վարդուհին ամբողջ գիշեր զուռը բաց ու խուփ անելով, մթան մեջ նայելով փողոցի յերկարությամբ, մոտիկ ծանոթների տներն հարցնելուց յետո դառն հուսահատությամբ նստած թախտին լուռ վողբում եր:


Սիմոնը յերբ դրսից տեսավ կիսախավարի մեջ նստած կնոջը ծնկները արօրելիս, կանգնեց շեմքին յերերուն ու յերկմիտ: Ուզեց նորից յետ դառնալ, ինքն ել չիմանալով թե ուր: Դեռ չեր շուռ յեկել, \*յերբ հանկարծ մեծ թափով կծիկի նման մի բան դիպավ նրա սրունքներին: Նա վայրկենապես շուռ յեկավ ու զարմանքից կարկասեց... Զալիկն եր. լեզուն դուրս գցած, հեալով, դունչը խրեց նրա սրունքների արանքն ու կլանչեց: Փաթաթվեց Զալիկը մի քանի անգամ Սիմոնի վոտներին, հոտոտեց, ալա շուռ յեկավ ու սկսեց վագել, մերժ կանգնելով ու յետ նայելով:

Սիմոնը հետեւում եր Զալիկին աչքը հառած նրան, մեկմեկ փողոցի այս ու այն կողմը նայելով անխօս, հեալով, միտքը լարված...

Վարդուհին ել նրա յետեկց եր վազում, հա-

զիվ հասնելով նրան իր մանր քայլերով։ Մոռացավ մինչև անգամ դուռը փակել։

Մի քիչ անց հանկարծ Զալիկը Սիմոնի աշքից կորավ, բայց ըոպէ չանցած նորից յետ գարձավ պոչը շարժելով, դունչը խփեց Սիմոնի ծընկներին ու շուռ գալով վազեց առաջ։



Մի ըոպեյից յետո Սիմոնն ու Վարդուհին սրբատարուի տեսան Զալիկին Պետրոսի մոտ...  
—

Անցել եր յերեք աժիս։

Գարնան գեղեցիկ որ եր։ Արեք պայծառ շողեր եր թափում քաղաքի վրա։ Դուներն ու պատուհանները բացվել եյին ու արագությամբ ծըծում եյին գարնան ողի թարմաքեր բուրմուճքը։

Նույն իսկ նկուղները, ուր չեյին հասնում արնի շողերը, կարողանում եյին հեռվից զգալ այդ շողերի կենարար շունչը։

Թախտին պառկած Պետրոսը նայում եր բայց դունից դեպի փողոց, վորտեղ ճառագայթները փայլեցնում եյին քարերն ու դիմացի տանիքի թիթեղը։

Թոքերի բորբոքումից նոր եր ապաքինվել, բայց դեռ բոլորովին կազդուրված չեր։

Մայրը Պետրոսին մի բաժակ կաթ խմեցնելուց հետո նստել եր թախտին, կար եր անում, յերբեմն-յերբեմն նայելով նրան։

Զալիկը գլուխը թաթերին դրած ննջում եր թախտի մոտ։

Դրսից լսվում եյին խաղացող յերեխաների ուրախ ձայները։

Պետրոսը թեքվեց, վիզը յերկարացրեց, նայեց հեռվից յերեացող հեռագրասյունին, վորի մոտ խաղում եյին մանուկները, ականջ դրեց նրանց աղմկալից ճիշերին, բայց շուտով հոգնած գլուխը դրեց բարձին։ Նա շուռ յեկավ մյուս կողքին ու ձեռը մեկնեց պայուսակին, վոր դրված եր բարձի մոտ։

— Նստում ես, Պետրիկ ջան, — ասաց մայրը, շտապ վեր կացավ, մի բարձ բերեց զրեց նրա բարձի վրա, Պետրոսին նստեցրեց, շալով փա-

թաթեց մեջքն ու կուրծքը և վերմակը քաշեց  
ծնկներին։


Պետրոսը վերցրեց պայուսակը, բաց արեց  
դողդողացող ձեռքերով, հանեց նրա միջից մի՛  
գիրք, նայեց գեղի դուրս կարոտալից հայացքով  
և դառնալով մորը, հարցրեց։

— Մայրիկ, վաղը չեմ գնալու դպրոց։

— Չե, զավակս. գեռ լավ առողջացիք, հետո  
— Մայրիկ, պայուսակը կապես մեջքիս։

Թեև շալի վրայով պայուսակը կապելը զըժ-  
վար եր, բայց մայրը մի կերպ հարմարեցընք  
և կապեց։

Այս խոսակցությունից ու շարժումներից Զա-



լիկն սթափվեց, աշխուժացավ, գուան կողմը նա-  
յելով մի «համֆ» արավ, ապա սկսեց նայել Պետ-  
րոսին։

— Ու՞յ, ույթ, ույթ, — կանչեց նրան Պետրոսը։  
Զալիկն ուրախաձայն հաջոցով թռավ թախ-  
արին։

Պետրոսը ծնկներին դրեց նկարազարդ «Շունն  
ու կատուն», սկսեց թերթել և նկարներին նա-  
յելով ժպտաց ու դառնալով շնրկին, ասաց։

— Տես, Զալիկ ջան, ինչքան նման ե քեզ  
ես շունը։

Զալիկը գունչը տարավ գրքին ու պլշած նա-  
յեց Պետրոսին։

Շարժվելիս պայուսակի փոկերը խտպտայ-  
նում եյին Պետրոսի ուսերն ու անութները, վա-  
րից մի հաճելի ջերմություն եր անցնում նրա  
մարմնով. գրքի նկարները ծիծաղում եյին նրա  
աչքերին... Իսկ ինքը՝ Պետրոսը յերևակայու-  
թյամբ թռչում եր գեղի դուրս, գեղի դպրոց—  
պայուսակը մեջքին կապած, «Շունն ու կատուն»  
մեջը՝ ընկերներին ցույց տալու։

Պետրոսը հրճվանքով բերանը բացեց, գու-  
նատ, նիհար մատը գրեց տողերին ու արտասա-  
նեց։

Ժամանակով կատուն ձնն եր...

## ՅԵՂԲՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Մանկական հիշողություն)

Քաղաքը պճնվել, տոնական տեսք և ընդունելու Արտակարգ կենդանություն և տիրում չորս կողմը, Փողոցները մաքուր՝ կարծես լվացված, սըրբված են; Նոյեմբերին վոչ հատուկ պայծառ յեղանակ է; Անձրևներից հետո արև, կապույտ — ջինջ յերկինք: Փողոցները, պատշգամբները, լուսամուտներն ու դռները զարդարված են գույնզգույն դորգերով, պլակատներով, դրասանդներով\*), վառ ծաղիկներով; Կարմիր գրոշակները մեղմ ծածանվելով, փոխադարձ ժպիտ են ուղարկում արևին, վոր առատորեն նրանց վրա յե թափել իր շոյող ու ժպտացող ճառագայթները:

Մարդիկ՝ բոլորը — մեծ ու փոքր, կին ու յերեխա գուրս են շտապել և փողոցների յերկարությամբ մըջյունների շարաններով առաջ են հոսում, յերկսեռ մանուկները տղտղալով ու բզրդալով մեղունների ու բզեզնների պես այս ու այն կողմն են վոստոստում:

\* ) Մաղկեղթաւ — գիրլանդ:

Մուսթավելու պողոտան հատող փողոցների անկյունները բռնված են հոծ բազմությամբ. կարգապահ միլիցիոններներն ու ձիավոր կարմիր բանակայինները պատվար են կանգնած մարդկային հեղեղի դեմն առնելու, վոր պողոտան ազատ լինի յերթի համար:

Նոյեմբերի ութին ե. Հոկտեմբերյան հեղափոխության 16-րդ տարեդարձի հաջորդ որը:

Թիֆլիսի զործարանների, Կարմիր բանակի, դպրոցների, համալսարանների Փիգկուլտուրնիկները ուայոն-ուայոն դուրս յեկան և ձուլածո շարքերով, ինչպես մի թարմաբեր շունչ սուրացին փողոցներով: Քառասունուհինք հագար մարզված պատանիներ, ինչպես միաձույլ մի մարմին անցնում են առջևովզ:

Անցնում են շարքերն իրար յետևից՝ կարմիր, սպիտակ, կապույտ բաճկոններով — ամառվաթեթե հագուստներով, նույնպիսի գլխարկներով, յերաշտության վոգեսրիչ նվազների, թմբուկի համաչափ կտկառցների ուղեկցությամբ:

Անցնում են առողջ շարքերով, կուրծքերը դուրս գցած, գլուխները բարձր, խնդուն դեմքով, յերջանիկ ու հպարտ ժպտով: Խորհրդային պատանու ֆիզիքական առողջությունը, հոգու կայտառությունն և ցուցագրվում այսոր:

Կարմիր բանակային — Փիգկուլտուրնիկների

պողպատյա քայլերին հաջորդում են պիոներական շարքերը — Հոկտեմբերի կրտսեր սերունդը։ Ապա յերեսում ու տնօնում են հաջորդաբար տասնամյակների, տեխնիկումների, բարձրագույն դպրոցների, գործարանների ֆիզկուլտուրնիկները։

Բայց ամենից հպարտ, ամենից վոզնորված քայլում են պիոներները...

Ուսումնի, ծունկ-ծնկան՝ կանոնավոր, համաշափ քայլերով, մարզված բանակայինի նման սուրում են նրանք գլուխները բարձր և, ամբիոնին ժոտենալով, վոգեռված գոչում են։ «Միշտ պատրաստ»։ Ցնծում են իրենք՝ պիոներները, ցնծում են նրանց ձայնից նրանց գիմավորողները, ցընծում են դիտողները, ցնծում են բազմությունը։ Նրանց քայլվածքի, կեցվածքի, ժպտի ու ձայնի մեջ արահայտում են ներքին յերջանկության զգացմունք։ Այդ զգացմունքն են, վոր բորբոքված կրակի պես նրանց կուրծքն ուռեցնելով, բարձրանում են վեր, ու բառեր դառնալով, դուրս ենետվում կոկորդից՝ «Միշտ պատրաստ»։

Ընկերոջս հետ դիտում ենք հանդեսը. նորանոր շարքերի հետ հայացքներս գնում են գեղի ամբիոն ու նորից յետ դառնում մյուս շարքերին։

Յեկան վերջին շարքերը, հեծանիվներին թառած, աղավնիների պես ողը հեղեղով...

Յերթը վերջացավ։ Յերաժշտության ու թըմբուկների արձագանքները ձուլվելով ողի հետ, ալիք-ալիք տատանվելով մեղմացան, հանգան։

Անկյուններում խտացած բազմությունը՝ ամբարտակը հանկարծ պատուած գետի պես հեղեղեց Ռուսթավելու պողոտան։

Մենք ել՝ յես ու ընկերս խառնվեցինք նրանց և միմյանց հաղորդելով տպավորություններս առաջ անցանք։

— Տեսմբ պիոներներին, — ասաց ընկերս, — ինչ հաղթական քայլերով եյին ընթանում։ Կարծես պատերազմում հաղթանակ աարած բանակ երգերադառնում։

— Միայն պիոներները, ասացի յես. — բոլորն ել հրաշալի եյին։

— Ճիշտ ե... Բայց պիոներներն ուրիշ եյին, — ասաց ընկերս հաստ ձեռնափայտին հենվելով. — պիոներներն իրենց այդ հաղթական յերթով, իրենց անհոգ ու յերջանիկ ժպտով իմ մեջ զարթեցրին մի հին հիշողություն։

Բազմությունից բաժանված յերկուսով դանդաղ առաջ եյինք գնում զառիվեր փողոցով։ Ընկերս՝ կարծես հնուց իր մեջ բուն դրած թախծի մի հառաջանք դուրս թողելով, պատմեց հետեւյալ պատմությունը, վոր յես գրի առա մեր պիոներների համար։

— Իմ յեղբայր Արշամն այդ ժամանակ իննը տարեկան եր, յես վեցս նոր եյի լրացրել:

Մի որ հանկարծ բախտը ժպտաց Արշամին, Նա այնքան բախտավոր համարվեց, վոր բոլորը նախանձում եյին նրան:

Թե հարեվաները, թե ազգակաները և թե բոլոր ծանոթները տեսնելով նրան, մի գլուխ այն եյին ասում թե՝ «Յերանի դրա տիրոջը, Տես, ինչ ծնողներից ինչ մարդ պիտի դուրս գա»:

Բայց զարմանալին այն եր, վոր մեր դրկից Զաքար Անանիկյանն ել սկսեց նախանձել յեղբորս, թեև նա իր նախանձը թագցնում եր և պարզ չեր արտահայտում:

Զաքարը, վոր իմ խաղընկերն եր, միշտ մեր նախանձի առարկան եր: Նըանց տունը յերկհարկանի գեղեցիկ շինություն եր՝ ընդարձակ, պարսպապատ բակով, կարմիր ներկած մեծ դարբասով:

Զաքարի հայրը խանութ ուներ, վորտեղ բազմատեսակ ապրանքների հետ ծախում եր նաև կանֆետ ու արևածաղկի սերմ:

Մեզ այդ տեսակ-տեսակ ապրանքները չեյին գրավում: Ամենից շատ մենք հետաքրքրվում եյինք արևածաղկի սերմով ու կանֆետով, իսկ աղջիկները՝ մաստակով, և ահա թե ինչու: Զա-


քարը շարունակ գրաններն ուղղրած եր մինում բոված սերմով և կարծես մեզ զրդուելու համար շարունակ չըթում եր, կամ կամֆետը՝ կեսը դուրս հանած, կեսը բերանի մեջ, ծծում եր ու իր կապույտ չար աչքերով խորամանկորեն մեզ նայում: Մենք վզներս ծուած, բերաններիս ջուրը ծորեցնելով նայում եյինք նրան նախանձով լի հայացքով: Յերբեմն նա սրան կամ նրան մի-մի բուռ սերմ եր տալիս, կամ կիսով չափ ծծած կանֆետը բերանից հանելով, ընկերոջ բերանն եր կոխում:

Մենք մեր մանուկ տեղով արդեն զլխի եյինք ընկել, վոր Զաքարն այս բանն անում եր վոչ թե ընկերսիրական զգացմունքից դրդված, այլ վորպեսզի խաղընկերներից շատերին իր հետ կապե: Յեկ իսկապես այդ բանի շնորհիվ մեզանից շատերը, նույնիսկ 10-12 տարեկան տղաներ նրա շուրջն եյին խմբվում խակերի ժամանակ, նրա կողմն եյին պահում կորիմներ պատահելիս: Նա հետզհետե հեղինակություն եր ձեռք բերում մեր շրջանում: Բայց թե հակառակորդները և թե կողմանակիցները մի խորը նախանձով եյին լցված գեպի Զաքարը: Մենք ատում եյինք նրան, նախանձում եյինք, բայց աշխատում եյինք մոտ լինել նրան:

Մեր այդ նախանձն ավելի սասականում եր

Նոր-ատարուն կամ զատկին, յերբ նա նոր շորերով պճնված, ճոճոան կոշիկները փոտներին դուրս եր գալիս մեզ հետ խաղալու: Իսկ մենք կարկատնած շորերով, վոտարոբիկ, կամ ծակծկված շուտերավ ու տրեխներով նայում եյինք նրան դարձանքով, հիացքով, նախանձով լի:

Նրա յեղայրը մի անգամ թիֆլիսից յեկավ մեր քաղաքը և Զաքարի համար նոր, զարմանա հրաշ զգեստ բերեց, վոր յերբ նա հազար ու դուրս յեկավ, բոլորիս խելքը տարավ:



Դա մի նորաձեւ հագուստ եր, վոր մենք առաջին անգամն եյինք տեսնում:

Զաքարը ծածկել եր գառան սպիտակ մորթե փափախ, վորի ձյունանման փարթամ գանգուր-

ները թափվում եյին մինչեւ ունքերը և ծածկում եյին ականջները. գագաթը կարմիր մահուդ եր՝ վրան խաչածե վոսկեթել յերիզներով, վորոնք շողշողում եյին արեկ տակ: Հագել եր կարմրադույն շալե չուխա, վորի փեշերը համնում եյին մինչեւ սրունքները և դիպչում կոշիկների ճակերին: Կրծքի վրա աջ ու ձախ կարված եյին փամփրշտականեր, վորոնց մեջ շարված եյին փայտե փամփուշտներ սև գլուխներով, կանոնավոր, ինչպես շարք կանգնած զինվորներ: Կապտագույն մահուդե փարտիկը յերկու կողմից գեներալական կարմիր ժապավեններ ուներ: Կոշիկների յերկար փայլուն ճակերը ծալծալ դարսված եյին ինչպես հարմոնի սեղմ ծալքեր և հասնում եյին մինչեւ ծնկները փարտիկի վրայից:

Դուրս յեկավ Զաքարը սիգաճեմ առաջին անգամ, փքված հնդկահավի պես, մի քիչ շփոթված, վոր մեզ թվաց թե՛ և հպարտությունից եր և մի քիչ ել ամաչելուց, վոր հատուկ է նոր շոր հագնողին:

Այդ որը մեր խաղը շատ բոնազբոսիկ յեղավ, իսկ գիշերը, յերբ պատկեցի, յերկար ժամանակ քունս չեր տանում: Աչքիս առաջ շաբունակ Զաքարն եր հերիաթական հագուստով, իսկ միտքս թռչում եր գեպի թիֆլու, վոր այդ ժամանակ ինձ թվում եր մի կախարդական աշխարհ, վոր-

տեղ մարդիկ հագնում են շողջողուն ծիրանի գգեստներ, ուտում են վոսկե պնակներով համադամ կերակուրներ ու քաղցրեղեն։ Յես պատկերացնում ելի, թե ինչպես Զաքարի յեղբայրը զբանից փող և հանում ու նրա համար աննըման հագուստներ գնում։ — Ինչքան փող տված կլինի — մտածում եյի յես — ինչքան փող ունեն, վոր այդպիսի թանկագին բաներ են գնում։

Յեզ ինձ թվում եր, թե այդ գիշեր բոլոր բնկերներս ել անքուն պառկած նույն պատկերն են տեսնում ու նույն բաները մտածում։

Յնս կազակ չեյի տեսելու Ասում եյին, վոր Զաքարը կազակի շորեր և հագել. և նրա անունն ել զրին զազախ։

Զաքարն ինքն ել հոգարտանում եր այդ անունով, ու հետո սկսեց մի բարակ կարճ ճիպոտ առնել ձեռքը։

## II

Յեկավ ժամանակ, վոր իմ յեղբորը բոլորը նախանձեցին, և նախանձողներից մեկն ել Զաքարըն եր։

Բայց իմ յեղբայրը վոչ այդպիսի շորեր ուներ, և վոչ ել զրպանները լիքն եյին լինում զազախ Զաքարի պես։

Մի աշնան որ, յերբ կալ ու կուտը վերջու-

ցրել եյինք, հայրս Արշամին յետելը զցած տարավ բազար։ Յեղբայրս յերկար ժամանակ չերեցաց. ապա կեսորին տուն յեկավ ուրախ-ուրախ ու դարձավ մորս թե՝ «մայրիկ, ինձ ընդունեցին ուսումնարան»։

Իսկ յերեկոյան հայրս շատ ուրախ տրամադրությամբ, մի քիչ ել քեֆը տեղը տուն յեկավ, հաց ուտելիս յերգեց, վոր շատ քիչ եր պատահում և դառնալով մորս՝ ասաց.

— Մի չանթա\* ) կարի Արշամի համար, ուսումնարան ընդունել տվի։

Ապա կարծես արդարանալու համար, վոր խըմած եր տուն յեկել, ավելացրեց.

— Բազարում բոնեցին՝ թե աչքալուսանք պիտի խմենք, տղեղ բախտավորվեց։

Հայրս հենց նույն գիշերը հին չեղիմի կտորից մի չանթա կարեց։ Իսկ Արշամը կողքիս պառկած ամբողջ գիշեր վոչ ինքը քնեց, վոչ ել ինձ թողեց քնելու։ Մեկ պատմում եր ուսումնարանից, մեկ սկսում եր մի հեքիաթ, ապա կիսատ թողնելով, ելի ուսումնարանից եր խոսում։

Մեր տանեցոց ուրախությանը չափ չկար։ Հայրս վոգեորվել եր և հաճախ յերեկոները շուտ տուն գալով, յերգում եր, կամ զրույց ու հե-

\* ) Խուրջինածկ պայտառակ։

քիաթ եր պատմում։ Լուակյաց հայրս դարձել եր շատախոս։

Մայրս հաճախ արտասվում եր ուրախությունից։ Իսկ յես առանց հասկանալու և ուրախանում եյի և նախանձում Արշամին, վոր ընդհանուրի հետաքրքրության առարկան ու խոսակցության նյութն եր դարձել։

Յեվ իսկապես Արշամը նախանձի առարկա յեր դարձել, վորովհետեւ դպրոց եր ընդունվել։

Մեր թաղի յերեխաներից վոչ մեկը դպրոց չեր հաճախում։ Դպրոցը հարուստ ու բախտավոր մարդկանց զավակների համար եր։ Իմ խաղընկերները բոլորն ել բորբկ ու կիսամերկ՝ կամ հոտաղություն եյին անում, տափարած ու հորթարած եյին, կամ պարսպ թափառում եյին փողոցներում։ Մենք աղբանոցներից ճան\*) ու հին գուլպաներ եյինք հավաքում։ Հին գուլպաները քանդում եյինք, գույնզգույն թելից թոփ\*\*) շինում խաղալու համար։ Ավելի «բախտավորները» տներում այս կամ այն տիրացուի մոտ այբուբեն եյին սովորում։

### III

Մեր փոքրիկ զավառական քաղաքում յերկու դպրոց կար։ Մեկը քաղաքային դպրոցն եր,

\*) Վեգ։  
\*\*) Գնուակ

վորաեղ սովորում եյին ունեորների զավակները – վաճառականների, մասամբ ել արհեստավորների։ Մյուսը, վոր գտնվում եր յեկեղեցու բակում, միդասյան եր (յերեքամյա) և կոչվում եր «յեկեղեցական - ծխական» դպրոց։ Այստեղ սովորում եյին գլխավորապես արհեստավորների զավակները։ Աղքատ մարդկանց զավակների համար այս դպրոցն ընկնելն ել յերջանկություն եր։

Յեվ իմ յեղբայրն այդ յերջանիկներից մեկը յեղափ։ Հորս ընկերակիցները՝ իր նման յերկրագործները նրան աչքալույս եյին տալիս ու յերանի։ Հարեւան կանայք, յերբ մեր տուն եյին դալիս, հաճախ մորս ասում եյին. «բախտավորվեցիր, Անախաս, տղեգ ուսումնարան ե գնում»։ Իսկ խաղընկերներս բացի նախանձից մի տեսակ հարգանք ել եյին տածում դեպի Արշամը։

Բայց զարմանալին այն եր, վոր—ինչպես ասացի—Զաքարն ել եր նախանձում։ Զաքարը սովորում եր քաղաքային յերկասյան (վեցամյա) դպրոցում։ Վոտից զլուկ նոր շորեր հագած, կաշվե պայուսակը մեջին կպցրած, լայն գոտին կապած, ձեռքերը գրպանն եր գնում ու դպրոց գնում։ Նրա կողքին իմ յեղբայրը իր խունացած ջեջիմե չանթայով, հին, կարկատնած շորերով ու ծակ չստերով մի մուրացկանի յեր նման։ Սա-

կայն Զաքարը դօան ել եր նախանձում։ Խաղերի ժամանակ միշտ իրեն հեռույթեր պահում Արշամից և յերբեք նրան իր խմբի մեջ չեր առնում։ Շատ անգամ ել ուսումի ու դպրոցի մասին խոսելիս Զաքարն ամբարտավանորեն ասում եր Արշամին. «Ձեր դպրոցն ի՞նչ ե վոր. շենքը գոմի նման է, վարժապետները քոսոտ—վոչ կոճակագոր սյուրտառուկ ունեն, վոչ կոկարդավոր գըլխարկ։ Այ, դպրոցը մերն ե՝ քաղաքայինը»։

Թեև Արշամն իմ մեծ յեղայրն եր, վորին սիրում ու հարգում եյի, բայց ինձ թվում եր, թե ամենից շատ յես եմ նախանձում նրան։ Սակայն իմ նախանձը չարության նախանձ չեր։

#### IV

Յերբ Արշամը չանթան թեր գցած ուրախուրախ վոստոստերով տուն եր գառնում, յերբ մեկ-մեկ յերեկոները վոտանավորներ եր ասում, կամ զիրքը բաց անում սիրուն-սիրուն պատմություններ կարդում կմկմալով, մատը գրքի տողերին դրած, յես բերանաբաց, հիացքով նայում եյի նրան ու մտածում, թե յերբ յես ել կարգանանամ նրտ բախտին։


Հայրս խոստացել եր, վոր հաջորդ աշնանը ինձ ել պիտի տա դպրոց։ Յես վոգեորված այդ խոստումներից, ուշադրությամբ լսում եյի յեղ-

բորս կարդացածները։ Նրա արտասանած վոտանավորներից շատերն անգիր եյի արել, ու շատ անգամ ել մատս տողերի վրա սահեցնելով փոքրիկ պատմությունները կարդում եյի, առանց տառերը ճանաչելու։ Այսպես կարդալով այնքան ընտելացա, վոր շատ տառեր սկսեցի ճանաչել։

Յես անհամբեր սպասում եյի աշնանը, վոր յեղբօրս հետ դպրոց գնամ։ Մայրս չգիմանալով իմ թախանձանքին, ինձ համար ել մի չանթակարեց։ Արշամի գրած տետրակներն ու թղթերը լցնում եյի չանթայիս մեջ, գցում եյի թես ու «դպրոց» եյի խաղում։ Յերբ առավոտներն Արշամը ճանապարհվում եր դպրոց, յես ել վերցնում եյի չանթաս իմ «գրքերով» ու «գրենական պիտույքներով» շտապում եյի «դպրոց»։ Իմ գրենական պիտույքներն եյին՝ կոտրած մի սրվակ իբրև թանաքաման, հավի փետուրից շինած զրիչ, խմորե ռետին, ծայրն այրած փայտի կտոր իբրև մատիտ։ Մի կտոր հաց ել իբրև նախաճաշ գնում եյի չանթայիս մեջ, չանթաս գցում եյի թես ու շտապ-շտապ գնում եյի մեր մարագը։ Այստեղից արագ քայլերով յետ եյի դառնում, չանթայիս միջից թղթերը հանում ու դարսում եյի «նստարանիս»։ Նստարանս ել այսպես եյի շինել յերկու կործած\*) կճուճների վրա

\* Բերանի վրա շուռ տված։

մի տախտակ եյի զբել, կողքին ել մի փոքրիկ կճուճ կործել նստելու համար։ Մի ժանդուա, գործածությունից դուրս ընկած թիթեղե մատուցարան ել կանգնեցրել եյի պատի մոտ իբրև գրատախտակ, վորի վրա խզմզում եյի գաճի կըտորով։ Փոքր քրոջս ձեռը տալով իմ շինած խորդ ու բորդ «քանոնը», նստեցնում եյի կճուճի վրա իբրև ուսուցիչ։ Քրոջս պատվիրում եյի, վոր ինձ



վրա մեկոմեկ բարկանա, մեկ-մեկ զովի, մեկ-մեկ ել քանոնով ձեռքիս խփի՝ իբր թե դասա չեմ սերտել։ Մի խոռոշով անում եյի այն ամենը, ինչ վոր կատարվում եր դպրոցում, և յես պատկերացրել եյի Արշամի պատմածներից։ Յերբ քույրս ձանձրանում եր, մաղերից քաշում եյի, վոր դերը լավ կատարի։

Մայրս ներքին ուրախությամբ լցված, իր գործը կատարելիս աչքի տակով նայում եր ինձ բերկրակից ժպտով ու կրկնում եր հորս խոսքերը։

— Յեկող աշնանը քեզ ել կուղարկեմ ուսումնարան։

Յես ել Արշամի պես ինձ յերջանիկ եյի ըդգում։

Բայց վոչ Արշամի յերջանկությունը յերկար տևեց, վոչ ել իմ քաղցր հեռանկարներն իրականություն դարձան։

## V.

Մի մառախլապատ որ եր. . մի սե որ:

Արշամը գնացել եր դպրոց։ Յես ել «առաջին դասը» վերջացնելուց հետո թիթեղի կտորով կաթսան զնզնգացնելով «զանգ տվի», և իբր թե դասամիջոց եմ անում, սկսեցի վազվզել, վոր քիչ հետո նորից «զանգ տամ» ու յերկրորդ դասըն սկսեմ։ Քրոջս ել ասացի, վոր իր տիկնիկով կարող ե խաղալ, քանի «դասամիջոց» ե. Մայրս թոնրի կողքին նստած խմորից գնդեր եր շինում, վոր հաց թիսի։ Թոնրից ծխախառն բոցը բարձրանում եր վեր, կայծեր տարածելով շուրջը։ Մայրս շուտ-շուտ բարկանում եր ինձ վրա, վոր տան մեջ չվազվզեմ, թոնրը չընկնեմ։

Մեկ ել անակնկալ ներս ընկավ Զաքարը հե-  
փալով ու մի տեսակ չարախինդ ձայնով հարց-  
րեց.

— Արշամը չեկավ:

Մայրս զարհուրեց:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց նա ահաբեկ-  
փած ձայնով Զաքարին, բայց Զաքարն արդեն  
դուրս եր թռել և չսեց նրա հարցը:

Մայրս սաստիկ հուզված, ձեռի գունդը շը-  
պրտեց տաշտի մեջ, սփրոցի ծայրն արագու-  
թյամբ քաշեց պատրաստ զնդերի վրա, փեշերը  
թափ տվեց և պատրաստվում եր դուրս գալ ի-  
մանալու, թե ի՞նչ ե պատահել:



Հանկարծ շրխկալով գուռը բացվեց ու գի-  
պավ պատին, գունդ քարի նման ներս նետվեց  
Արշամը, և ամբողջ թափով չանթան շպրտելով  
տան յերկարությամբ թոնրի բոցերի մեջ, յերե-  
սի վրա փովեց գետին ու սկսեց անբնական բար-  
ձըր ձայնով լաց լինել ու թափալվել հողե հա-  
տակին:

Մորս սարսափը սաստկացավ: Ծնկներին խը-  
փելով վազեց Արշամի մոտ, արտասուրով հեղեղ-  
փած ու ցեխ դաշտած նրա յերեսն առավ ձեռ-  
քերի մեջ, նայեց աչքերին, յերեսին, ականջնե-  
րին. կուրծքը բաց արավ, մարմինը շոշափեց,  
կարծելով, թե վիրափորփած ե մի տեղից: Մորս  
լեզուն ել բոնվել եր: Դողդողացող շրթունքնե-  
րով կմկմալով հազիվ արտասանում եր այս խոս-  
քերը.

— Ի՞նչ ե, բալիկս .. ի՞նչ ե պա...տահել...  
մվ խփեց... մահի թուրը նրա սիրտը խրվի...

Իսկ Արշամն առանց պատասխանելու, առանց  
նրա վրա ուշադրություն դարձնելու գոռում եր  
բարձրածայն, կարծես կուրծքը զանակ խրած  
լինելին: Յես ու քույրս սարսափից բարացած  
մեկ նրան եյինք նայում, մեկ մորս: Քույրս եք  
բարձրածայն լաց սկսելով, վազեց, փաթաթվեց  
մորս փեշերի մեջ, կարծես մի մեծ վտանգից  
պատսպարան գտնելու համար:

Արշամը շարունակում եր թափալվել։ Վոտները ցնցում եր ու գետնին հարվածում, ինչպես մորթվող գառը։ Մատները չուած ու կեռած գետինն եր ճանկում և ամընդհատ գոռում եր մահացու վերք ստացած մարդու նման։

— Ախար ի՞նչ ե պատահել, քո մերը քոռանա, մի ասա տեսնեմ, յես մեռա ե, — ճշաց մայրը, թափով նրա զլուխը բարձրացնելով։

Արշամը հանկարծ ճայնը կտրեց, արցունքները սնքրտալով կուլ տվեց, շրթունքները ծումուց ու կերկերուն ճայնով ասաց։

— Մեր ուսումնարանը փակեցին, մայրիկ ջան…

Ապա ընկճված հայացքով, մարող աչքերով զլուխը դրեց մորս գողը։ Ամբողջ մարմինը թուլացած, անշարժ փռած գետնին՝ հանդարտ, մորմոքուն ճայնով սկսեց հոնքուր-հոնքուր լաց լինել։

Մայրս խփեց ծնկներին, յերեսը դրեց նրա զլիսին, արցունքները լուռ թափեց նրա փոշեթաթի մազերին ու հաղիկ լսելի ճայնով արտասահնեց։

— Աչքով կերան մեզ, պատովի չար աչքը։ Արշամի մորմոքը հետզետե հանդարտվեց, հանգավ։ Այդպես ել քնից նա հատակին։

Մայրս մի կապերտ փռեց Արշամի կողքին,

թուլացած մարմինը դժվարությամբ շուր տվեց կապերտի վրա, զլիսի տակ մի բարձ դրեց ու ջեջիմը փռեց վրան։


Քիչ հետո յեկավ հայրս. մոայլ դեմքով, աչքերը հոնքերի տակ թագցրած նստեց, մեջքը հենելով պատին։ Լուռ նայեց Արշամին, չանթայի միջից դուրս թռած և շաղ ընկած թերթերին, կոտրած թանաքամանին, տրորված գիշարկին։ Ապա հանսեց տուփը գրպանից ու սկսեց ծխախոտ փաթաթել։ Արցունքի մի խոշոր կաթիլ ընկավ փաթաթվող ծխախոտի թղթին, նրա մատները դողդողացին, թուղթը պատովեց, և նա կիսափաթաթ ծխախոտը դրեց տուփի մեջ։ Առաջին անգամն եր, վոր յես հորս աչքերին արցունք ելի տեսնում։

Այդ որը մեզ համար գիշերից ել ու դարձավ, և յես չվմացա, թե ինչպես գիշերը խառնվեց ցերեկվանը։

Դուրսն ընկերներս խաղում եյին, և շապարզ լսվում եր Զաքարի ուրախ քրեիչն ու հաղթական ճայնը։

Յերեք որից հետո հայրս Արշամին տվեց հոտաղության, իսկ մի ամիս անցած ուղարկեց Թիֆլիս աշկերտության, վոր փող աշխատի։

1884 թիվը եր։ Սլեքսանդր III կայսրի հրամանով հայոց բոլոր դպրոցները փակվել եյին։



Հազարավոր մանուկներ փողոց շպրտվեցին, վորոնցից մեկն եր և Սըշամը,

— Այս՝ յեղբորս պատմությունն եր, իսկ յեթե լսես քրոջս պատմությունը, մազերդ բիզիկ կկանգնեն, — ասաց ընկերս, յերբ մենք առգեն մոտեցել եյինք տանը:

— Գնանք մեզ մոտ, — ասացի յես ընկերոջս, նրա թեկից քաշելով. — միասին կճաշենք, մի քիչ կխոսենք, վաղը հանգստի որ ե, Մերոնք շատ կուրախանան... զե՞ վոր մեր տանն ել կան այդ չարաձճիներից — յերկուար

պիոներ ևն, փոքրիկն ել արդեն հոկտեմբերիկ ե:

Մենք ճաշից հետո թեք ընկանք հանգստանալու, բայց փոքրիկները խանգարեցին մեր հանգիստը. Ներս ընկան, ճլվլալով սկսեցին պատմել իրենց տպավորությունները Փիզկուլտուրնիկների յերթից և ապա թախանձեցին ընկերոջս՝ մի հետաքրքիր բան պատմել:

Նա ել պատմեց իր քրոջ պատմությունը:

Այդ պատմությունը յես նույնպես գրի առա և ահա տալիս եմ իս ընթերցողներին:

# ՔՐՈԶ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Մանկական հիշողություն)

## I

Այդ որը հայրս սովորականից շուտ ավարտեց իր գործը—տավալարը ջրեց, խոտ ու հարդ բերեց, լցրեց առաջները, զոմը մաքրեց, աղը կողովով տարավ թափեց բակը:

Գործը վերջացնելուց հետո ել բազար չկնաց, ինչպես անում եր սովորաբար:

Հորս դեմքը մռայլ եր, ինչպես այդ որվայրկինքը:

Իսկ այդ ժամանակ աշուն եր՝ խոր աշուն, յերբ մեր յերկինքը ծածկված եր լինում թուխու գորշ ամպերով, վորոնք բարդ-բարդ իրար վրա դարսված, կարծես տիրության կնճիռներ եյին յերկնքի յերեսին:

Սարերի գագաթներն ու լանջերն արդեն սպիտակել եյին:

Փշում եր հյուսիսային սարսուաբեր շունչը—անախորժ քամին, վոր—ինչպես մենք եյինք տ-

առւմ—ձյան համար տեղ եր բաց անում, վորով հետեւ նա փշում եր անընդհատ, համառ: Կարծես մի հսկայական ցախավել եր, վոր սրբելով քաղաքի փողոցներից ու բակերից հարդի մնացորդներն ու ազբախառն փոշին, քշում տանում եր դեպի հեռուները՝ չգիտես ուր:

Մայրս նույնպես տխուը՝ ախ ու վիշ անելով, մնդուկից հանեց իր պահծու սեագույն զգեստները, հագալ, շալը զցեց զիսին, փաթաթվեց նրա մեջ և հորս հետ դուրս յեկավ տանից:

— Դուռը փակեցեք, նստեք քուրսու տակ, ձեզ համար զրույց արեք, մինչև մենք կգանք, — ասավ մայրս, և ապա դառնալով մեծ քրոջա ավելացրեց — (յախնին<sup>\*)</sup>) թոնրից կհանես-կուտեք. տեղերը կշինես, կպառկեք. կարելի յէ մենք ուշանանք՝ կընեք:

## II

Այդ որերը մեր քաղաքը սգէ մեջ եր:

Յերկրորդ տարին եր, վոր հայերից զինվոր եյին վարցնում ցարական բանակը տանելու համար:

Այն ժամանակ հիմիկվա պես չեր: Այժմ մեր յերիտասարդները խաղով-պարով, ուրախ յերգե-

<sup>\*)</sup> Յախնի—մասվ կերպուր:

բով ու վոգեղությամբ գնում են կարմիր բանակ: Ծնողներն ել հպարտությամբ են ուղարկում իրենց զավակներին մարզվելու, ուսում առած, «մարդ դարձած» տուն դառնալու:

Այն ժամանակ ծնողները համոզված եյին, վոր իրենց անկեղու զավակներին անասունների պես սպանդանոց են քում:

Առաջին տարին գնացածները քշվել եյին Ռուսաստանի խորքերը — հազարավոր վերստեր հեռու իրենց ծննդավայրից: Նրանք պիտի ծառայեյին



ամբողջ հինգ տարի: Մի տարի յեր անցել, և շատերից լուր ել չկար: Հատ ու կենտ սրանից կամ նրանից նամակներ եյին ստացվում, վորոնց մեջ նըրանք վողբում եյին իրենց դառն օրերը ստալու:

թյան մեջ, զորանոցի անտանելի պայմանների մեջ:

Աշնան գեմ զինվորացու յերիտասարդների ծնողների միրտը լցվել եր ահով: Դողալով ելին սպասում վիճակահանության հետևանքին: Վիճակահանությունից հետո «վիճակ հանած» նորակոչիկների տները դարձան սպասուն: Յեվ վորով հետև մեր փոքրիկ քաղաքում համարյա բոլորը կապված եյին իրար հետ հեռու կամ մոտիկ ազգակցական կապերով, ուստի ամբողջ քաղաքը սուզ պատեց:

Վիճակ հանողներից մեկն ել իմ մորաքրոջ տըղան՝ Սահակն եր: Ամբողջ մի շաբաթ՝ ամեն յերեկո ազգականները, բարեկտմները, հարեւանները հավաքվում եյին նրանց տանը վողբալու նրանց հասած դժբախտությունը և մխիթարելու անբախտ ծնողներին, վորոնց զավակը ինչպես ասում եյին կենդանի-կենդանի գերեզման ե մըտնում, կամ ասում եյին — Սիրիք՝ տաժանակիր աշխատանքի յե ուղարկվում առանց հանցանք գործելու:

Մայրս ու հայրս ել այդ յերեկո գնացին մորաքրոջս տուն, իրենց ցավակցությունը խառնելու թշվառ ծնողների ծով վշտին:

Մենք չորսով եյինք տանը — մեծ քույս՝ Յերանյակը, յես, ինձնից փոքր քույրս՝ Մագթաղը և կրտսեր յեղբայրս՝ հինգ տարեկան Սարգիսը:

Սա մի սիրուն, կլոր-յերես տղա յեր. յերը  
ծիծաղում եր, կարսիր թշիկների և կզակի վրա  
փոքրիկ փոսիկներ եյին գոյանում. այնօան սի-  
րուն եյին, կարծես վարդի բաժակներ լինեյին.  
Դրա համար մենք նրան Վարդ-Սարդիս եյինք  
կանչում.

Մեծ քույրս այդ ժամանակ 13 տարեկան եր,  
փարթամ հասակով, կարծես 15 16 տարեկան  
աղջիկ լիներ. Յերեսը շեկ եր, Ռնքերը բարձր-  
ւայն կամարով ձգվում եյին խաժ աչքերի վրա,  
փորոնք շեշտակի նայելիս կարծես ծիծաղի ճա-  
ռագայթներ եյին արձակում,

Փոքր քույրս թեթև-ծաղկատար գեմքով մի  
աղջիկ եր, վորի նեղ աչքերը թարթում եյին  
դողդողալով, կարծես ամաչում եյին դիմացինին  
նայելիս. Նա սաստիկ վախկոտ եր և ամեն մի  
ձայնից վեր եր թռչում, վորի համար մենք հո-  
ճախ նրան ձեռք եյինք առնում, անվանելով «վախ-  
կոտ ճնճղուկ»:

### III

Թեև տան ընդհանուրի սիրելին ամենափոքրն  
եր՝ Վարդ-Սարդիսը, վորին փայփայում եյինք  
բոլորս, զվարձանում նրա ամեն մի շարժումով  
ու մանկական լեզվի քաղցր խոսվածքով, բայց

տան կենարոնական անձնավորությունը մեծ  
քույրս եր՝ Յերանյակը:

Հայրս սիրում եր Յերանյակին և հետը խոսում  
եր լուրջ, ինչպես մեծ մարդու հետ, թեև յեր-  
բեմն-յերբեմն հետը կատակներ եր անում, ինչ-  
պես փոքրիկ յերեխայի հետ:

Մայրս նրա արևով եր յերդվում: Տան մեջ  
թեև բոլոր կարգագրություններն ինքն եր ա-  
նում, ինքն եր կառավարում տունը, բայց առանց  
Յերանյակի խորհրդի վոչ մի բան չեր անում:  
Ամենահասարակ բանի համար ել նրա կարծիքն  
եր հարցնում:

— Յերանյակ ջան,— կասեր նա հաճախ ծալա-  
պատիկ նստած մեր շորերը ծնկներին վուած  
կարկատնելիս,— ապա մի տես, քո աչքերը լավ են  
ջոկում. ես կարկատանը ես կտորին բռնում ե,  
թե չե:

Յերանյակը վերցնում եր կարկատանը, յեր-  
կարությամբ, լայնությամբ գնում եր մաշված  
տեղի վրա. ապա մեծի պես լուրջ գեմք առած,  
հոնքերը մի տեսակ հպարտությամբ բարձրաց-  
նելով ու ցածրացնելով տալիս եր իր գճիոր.

— Հարմարվում ե, սալրիկ. այ, եսպես դիր:

Կամ հարմար չհամարելով կարկատանը, բող-  
չայից ջոկում եր ավելի հարմար կտոր և իր յեր-  
կար մատներով պարզում եր նրան:

— Այս, սա ավելի յե սազում, մայրիկ:

Մայրս ել չեր առարկում: Գոհունակ ժապիտը  
դեմքին, վերցնում եր կարկատանն ու շուլալում:

Չեմ հիշում մի դեպք, յերբ մայրս հիշեցներ  
Յերանյակին, թե այս կամ այն բանը պետք ե  
անել:

Իսկ նա շատ բան եր անում: Առավոտը վաղ,  
համարյա մորս հետ զարթնում եր, (իսկ մայրս  
շորեն արդեն հագած եր, յերբ դեռ աղջամուղ-  
ջը փարատված չեր լինում, և մենք լուսադեմի  
անուշ քնով մշմշում եյինք) սրահը, ապա բակն  
ավելում, ջրհորից ջուր եր քաշում, կժերը լրց-  
նում. ցան եր բերում, մորս հետ թոնիրը փա-  
ռում, լվանում - թափում, կարում - կարկատնում  
եր...

Ընդհակառակը, մորս բերանից շատ անգամ  
լուս եյինք այս խոսքերը.

— Աղջի, հոգիդ դուրս յեկավ, նստի, մի քիչ  
շունչ առ, յետեղ հո չեն ընկել:

Յես հետո, շատ հետո՝ յերբ արդեն խելահաս  
եյի դարձել, հասկացա, վոր մայրս կյանքի փոր-  
ձառությունից իր համար վորոշ դաստիարակչա-  
կան ձևեր եր մշակել: Նա աշխատում եր իր զա-  
վակների մեջ ժրաջանության սեր զարթեցնել  
վոչ թե քարոզներով, բարկանալով, ստիպմուն-  
քով, այլ իր կենդանի որինակով և նրանց ամե-

նաշնչին աշխատանքը գնահատելով ու վոգեորե-  
լով:

Իսկ մենք՝ փոքրիկներս կապված եյինք Յե-  
րանյակի հետ ավելի, քան մորս հետ, վորին  
այնքան սիրում եյինք: Մեզ հագցնողը, կերա-  
կրողը, փողոցային յերեխաներից պաշտպանողը,  
զբոսանքի տանողը, լողացնողը Յերանյակին եր:

Մայրս մեզ լողացնելիս զլուխներս այրում  
եր տաք ջրով, սանրելիս ցավացնում եր, սապ-  
նելիս աչքներս մըմուցնում եր ոճառի փրփու-  
րով: Մենք տաշտից դուրս եյինք թուչում, լաց  
եյինք լինում, գորգոռում: Իսկ Յերանյակը լո-  
ղացնելիս այնպես քնքուշ եր վարվում, վոր վոչ  
ցավ, վոչ մրմուռ, վոչ այրոց չեյինք զգում: Դրա  
համար, յերբ սայրս կանչում եր լողացնելու,  
մենք գիտ հորթի պես փախչում եյինք, չեյինք  
թույլ տալիս շորերս հանել: Իսկ յերբ Յերա-  
նյակը պիտի լողացներ, ուրախուրախ մոտ եյինք  
վաղում, ինքններս հանում եյինք շորերս և հնա-  
գանդ զառի պես մտնում տաշտը:

Մեզ համար ավելի հաճելի բան չկար, քան  
յերբ Յերանյակի հետ գնում եյինք քաղաքի վերեր  
տարածվող սարահարթի վրա ուրց կամ ավել  
քաղելու և կամ արտը քաղիանելու: Հավաքվում  
եյին թաղի մեծ ու փոքր աղջիկները 15 – 20  
հոգով մի մեծ խումբ կազմում, բողչա կապած,

առավոտը վաղ ձանապարհվում ելին հանդը: Մենք  
—յես, փոքր քույրս ու յեղբայրս ուրիշ յերե-  
խաների հետ խառնվում ելինք նրանց և պինչը  
քամի մտած հորթի պես տրտինգ տալով, առաջ  
ելինք արշավում: Թիթեռ ու միջատներ ելինք  
բանում, սինձ քաղում, շերեփուկ\*) հավաքում,  
ծաղիկներ փնջում:

Ըսկերուհիների շրջանումն ել նկատելի յեր  
Յերանյակի հեղինակությունը: Նա վոչ վոքի հետ  
չեր կովում, վոչ վոքի հետ խոռվ չեր (իսկ այս  
սովորությունը շատ եր տարածված աղջիկների  
մեջ): Յեթե մեկին մի փորձանք կամ զժբախ-  
տություն եր պատահում — ձեռքը փուշ եր մըտ-  
նում, քիթն եր արնում, կամ ընկնելով՝ մի տեղ  
եր ցագում, — Յերանյակն եր հասնում ոգնու-  
թյան:

Բայց ինձ թվում ե, վոր մենք Յերանյակին  
ամենից շատ սիրում ելինք նրա համար, վոր նա  
ոմեն յերեկո քնելիս նստում եր կամ պառկում  
մեր կողքին, սիրուն-սիրուն պատմություններ եր  
անում հերիաթ եր ասում, զվարճալի անեկ-  
դոսներ պատմում, կամ խոսում եր որվա դեպ-  
քերից: Զարմանալի բան ե այն, ինչ վոր մենք  
տեսել ելինք ու լսել, նույնիսկ մեր գլխով ան-

ցած բաներն ու մեր կատարածները Յերանյակն  
այն ձևով եր պատմում, վոր մենք ամբողջովին  
ականջ գարձած լսում ելինք նրա պատմությու-  
նը շունչներս պահած, ինչպես մի չլոված նորու-  
թյուն:

#### IV

Դուռը փակեցինք ու շարվեցինք քուրսու-  
տակը: Քանի վոր Յերանյակը մեզ հետ եր, ծր-  
նողներիս բացակայությունն զգալի չեր:

Ամեն մեկը մեզանից աշխատում եր Յերա-  
նյակի կողքին տեղ բռնել: Ով լիներ-չլիներ՝ ա-  
ռաջին հերթին Սարգիսը պիտի նստեր նրա մոտ:  
Յեկ այս բանին չելինք առարկում վոչ յես, վոչ  
փոքր քույրս: Մենք համոզված ելինք, վոր այդ  
այդպես ել պետք ել լիներ: Յեթե Սարգիսը տե-  
ղավորվում եր Յերանյակի գողում, կամ նստու-  
եր ծնկանը, այլևս վեճի լինդիր չկար. յես բռո-  
նում եյի մի կողմը, քույրս մյուս կողմը: Իսկ  
յեթե Սարգիսը նստում եր Յերանյակի կողքին,  
ապա իմ ու քըոջս մեջ կոխվ եր ընկնում թե  
մյուս կողքին ով պիտի տեղ բռնի: Մենք վի-  
ճում ելինք, հուզվում, շատ անզամ իրար մա-  
զեր քաշըշում, ճանկուում, մինչև վոր Յերա-  
նյակը մի կերպ մեզ հանգստացնում եր: Այդ  
յերեկո մանավանդ ամեն մեկս աշխատում եր

\* Զոխի մի տեսակը:



անպատճառ Յերանյակի կողքին նստել և վու-  
քան կարելի յե՛քիք: Յերանյակը նախ Սարդ-  
սին սուավ իր գոգը, իսկ յերբ յես ու քույրս  
տեղափորվեցինք նրա աջ ու ձախ կողմերում,  
մի քիչ անցնելուց հետո Յերանյակը դրկելով  
Սարգսին, ասաց.

— Վարդիկ ջան, ծունկս ցավեց, մի քիչ ել  
նստեղ նստիր, — ասաց ու նրան տեղափորեց իմ  
ու իր արանքում, թիր զցելով իմ վզով, վորով

ինձ մի տեսակ կարծես կաշառում եր: Յես այլիս  
շտրանջացի:

Կավից շինած մարդակերպ մեծ աղամանի  
տափակ զլիին դրած եր փոքրիկ լամպը, վոր ա-  
զոտ լույս եր տարածում սենյակի մեջ, զանա-  
զան առարկաներից յերկար ստվերներ զցելով  
սենյակի պատերին, հատակին:

Դուրսը փչում եր ուժգին քամին, վոր դռան  
առաջ ու յերդիկի մոտ մի անախսրժ շվշոց եր  
առաջացնում: Կտուրին դեղի վրա շունը վոռ-  
նում եր:

Այդ ստվերները, քամու շվշոցները, շան  
վունոցը խճճիթը լցրել եյին մի տեսակ վախով,  
վոր կրկնապատկվում եր այդ որվա մեր տրա-  
մադրությամբ:

Մենք լուռ ականջ եյինք դնում այդ անա-  
խորժ ձայներին:

— Քամին վիզի-վիզի յե անում, — ընդհատեց  
լուռթյունը Սարգսինը, նայելով Յերանյակին, կար-  
ծես նրանից կարգագրություն սպասելով, վոր  
այդ վզվզոցին վերջ տա:

Մենք ժպատկով նայեցինք Սարգսին, ապա  
լուռ շարունակեցինք ականջ զնել քամու վզվզոցին:

— Եղ ովք ե փչում քամին, — հարցը եց նորից  
Սարգսինը:

— Զմեոր, — պատասխանեց Յերանյակը:

- Վարտեղից և փշում:
  - Սարից:
  - Զմեուը վարտեղից և յեկել սարի վրա:
  - Ռւրիշ սարերից:
  - Ենտեղ վարտեղից և յեկել:
  - Ավելի բարձր սարից:
  - Ավելի բարձր սարի վրա վարտեղից և յեկել:
  - Ամենաբարձր սարից:
  - Բա ենտեղ վարտեղից և յեկել:
  - Վոչ մի տեղից. իրան տեղը ամենաբարձր սարի գագաթն ե:
  - Ամենաբարձր սարը վարտեղ ե:
  - Ո՞ո, շատ հեռու յե ամենաբարձր սարը:
- Մեր սարերից դենը ելի սարեր են, ելի սարեր: Եղ բոլորից դենը ամենաբարձր սարն ե՝ յերկնքի մոտ:
- Համա, — ասաց Սարգիսը, աչքերը պցելով գեպի յերդիկը, կարծես այնտեղ փնտոելով ամենաբարձր սարը:
  - Ամենաբարձր սարի վրա շատ ցուրտ և լինում, — հարցրեց նորից Սարգիսը, յերեսը թեքելով գեպի Յերանյակը:
  - Շատ, շատ ցուրտ ե լինում, ենտեղ մարդ չի կիմանա, կփետանա:
  - Բա ձմեուը չի մրսում, զոր ենտեղ ե ապ-

րում: Ձմեուը տուն ունի սարի վրա. քուրսի չի դնում:

Մենք ծիծաղեցինք, զորից Սարգիսը շփոթեց ու կարմրեց, թեև մեզ համար ել պարզ չեր, թե Ձմեուն ինչպես ե ապրում սարի վրա:

— Ձմեուը չի մրսում, — բացատրեց Յերանյակը, — Ձմեուը ձյունե հաստ քուրք ունի հագին, քուրքի տակ տաքությունը պահում ե իրան համար, իսկ ցուրտը փշում ե ուրիշների վրա:

Լուսթյուն տիրեց: Մենք անխոս մտածում ենք: Ինձ թվում ե, զոր այդ լուսթյան մեջ ամեն մեկն աշխատում եր պատկերացնել «Ձմեուը» իր սպիտակ քուրքի մեջ փաթաթված «ամենաբարձր» սարի վրա, իր բնակարանում: Այդպես ե թվում, զորովհետև յես այդ ըսպեյին լուս, մտքի մեջ ընկած աշխատում եյի պատկերացնել «Ձմեու». ի կյանքը:

Քամին շարունակում եր իր համերգը: Այդ համերգը կազմող տարբեր ձայները յերբեմն-յերբեմն մեր ականջներին եյին դիպչում ավելի վորշակի: Անախորժ եր մանավանդ բարակ սուլոցը հեռազրասյունից, զոր տնկված եր մեր տան մոտ:

Անախորժ եր այդ սուլոցն ավելի այն պատճառով, զոր հեռազրասյուներն իրենց խորհրդա-

Վոր սպիտակ ականջներով, այդ ականջների յերշու կողմից միջատի բարակ-յերկար բեխերի պես ձգվող լարերով քաղաքացիների աչքում մի գուժաբեր բան եյին յերևում։ Յերբ ասում եյին «թելեզրափ են ուղարկել», կամ՝ «թել են խըփել», այդ նշանակում եր, վոր դժբախտություն ե պատահել, մահվան բոթ ե յեկել։

Եռազգի սյուները ձգվում եյին քաղաքից գեալի հյուսիս, միմյանց յետելից գնալով հետպահտե փոքրանում եյին և անհետանում դիմացի սարահարթի վրա—սարերի քամակում։ Մեր տան գիմացը, քաղաքը յեղողող բարձունքի վրա ցցված եր այդ սյուներից մեկը, վոր մեղ թվում եր, թե մի կծկված բու յեր։

Սուլոցին ականջ դրեց, ականջ դրեց Սարգիսը ու նորից հարցրեց։

— Ես թելեզրափը ի՞նչ ե ասում, քույրիկ, վոր եղան վզվացնում ե։

— Թելեզրափն ասում ե. «Զմեռը գալիս ե, ցուրտը վրա յե հասնում, տուն մտեք, չմըսեք»։

— Ո՞վ ե խոսում նրա մեջ. Զմեռն ե խոսւմ, դա Զմեռի շինածն ե, ամենաբարձր սարեց ե գալիս,—իրար յետելից շարեց հարցերը Սարգիսը։

— Զե՞—պատասխանեց Յերանյակը, — դա

սարերի են կողմից, շատ հեռու տեղից ե գալիս. թագավորն ե շինել։

— Թագավորը, — զարմացավ Սարգիսն այս նոր հայտնագործությունից. ապա հոնքերը կիտեց խոր մտածմունքի մեջ ընկած մարդու պես ու հարցրեց։

— Թագավորն ել սարի վրա յե ապրում, Զմեռի մժամ։

— Զե, թագավորը շատ հեռու յե ապրում. սարերից, ծովերից են կողմը, շատ հեռու՝ Ռուսաստան, Սիբիր։

— Թագավորը բերան ունի, մարդ ե ուտամ, — հարցրեց Սարգիսը։

Մենք փրթկացրինք, թեև մենք ել իսկապես չգիտեյինք, թե ինչ բան ե թագավորը. իսկ Յերանյակը ծիծաղեց և բացատրեց։

— Թագավորն ել մարդ ե. մենակ մեղ նման մարդ չի. վոսկի շորեր ե հագնում, վոսկի թախտի վրա յե նստում. Բոլոր մարդիկ նրան ծառայում են: Ինքն ել՝ վոր բարկանում ե, մարդկանց սպանում ե: Այ, թագավորը թելեզրափ խփեց, վոր մեր ջանել տղերանցը հավաքենատանեն, իրեն սալդաթ դարձնեն։

— Նրանց տանում ե, վոր սպանի։

— Զե, թագավորը շատ անքարի 2 մարդ ե. ուրիշ թագավորների հետ կոիզ ե անում.

դրա համար ել տղերանցը հավաքում տանում է,  
վոր իրան համար կռվեն: Կռվի մեջ շատերն  
ապանվում են:

— Սահակն ել կսպանվի՞,—հանկարծ տխրե-  
լով հարցը Սարգիսը:

— Սահակը,—կըկնեց շփոթված, տխուը շեշ-  
տով Յերանյակն ու չգիտեր ինչ պատասխաներ.  
ապա յերկար մտածելուց հետո ավելացրեց. —  
չե՞, չի սպանվի. հիմի կռիվ չկա:

— Թագավորը նրան չի ուտի՞,—նորից հարց-  
րեց Սարգիսը:

— Չե, չի ուտի:

— Կսպանի՞:

— Չե, չի սպանի. բայց կչարչարեն, կծե-  
ծեն, կտանջեն խեղճին:

Նորից լոռություն տիրեց: Մենք նայեցինք  
իրար, կարծես իմանալու, թե ամեն մեկին ներ-  
սում ինչ եր կատարվում:

Լոռությունն ելի խզեց Սարգիսը.

— Թագավորը փիսն ե. յես թագավորին չեմ  
սիրում:

Յերանյակը մի տեսակ վախեցած դեմք ըն-  
դունեց, վոր շատ քիչ եր պատահում, նայեց  
շուրջը, դռան կողմը, կարծես մի բանից զգու-  
շանալով և ապա ցած, անվստահ ձայնով ասաց.

— Սուս, եղանակ չասես. թագավորը կի-  
մանա՝ լեզուդ կկարի:

— Վհրատեղից կիմանա, — զարմացակ Սարգի-  
սը, — չե՞ վոր նա շատ հեռու յե, սարերի են  
կողմը:

— Թելեգրաֆը խաբար կտանի: Ամեն տեղ  
ինչ վոր պատահում է, թելեգրաֆն իմաց ետա-  
լիս թագավորին: Թագավորի զաղախներն ել քա-  
ղաք են յեկել, վոր ով թագավորի վրա վատ բան  
ասի՝ խաբար ուղարկեն ու մարդկանցն ել սպանեն:

Բոլորս նայեցինք դուսն կողմը վարանոտ,  
սարսափող հայացքով: Մի ծանր բան կարծես  
իջավ վերեկց քամու սուլոցի հետ ու ձնշեց մեզ:

Մեր մանկական ուղեղում պատկերացավ թա-  
գավորը: Քամու սուլոցը, շան վոռնոցը, հեռա-  
գրի խորհրդավոր շվշվոցները, ձմեռվա  
շունչ սառնամանիրը, — այս բոլորը միախառնը-  
գած, մեր հոգում նկարեցին թագավորի անորոշ  
ուրվանկարը վոսկե գահի վրա նատած: Տան ան-  
կյունների ստվերներից մեզ նայում եյին կար-  
ծես նրա խոր ընկած մութ աչքերը ..

Կատուն, վոր քուրսու կողքին աչքերը փա-  
կած մոռացնում եր, ինչ վոր խշխշոց լսելով,  
վազեց գեպի թարեքը, ցատկեց թարեքի վրա և,  
ինչպես պատահեց, թարեքից վայր ընկակ թը-  
րըմփալով:

Թագավորը թախտից ընկապ,—բացականչեց հանկարծ փոքրիկ քույրս՝ Մագթաղը զվարթ ձայնով, կատվին նայելով:

Մենք նայեցինք այն կողմը և քբքջացինք մի տեսակ թեթևացած:

Այս չնչին գեպքը մեզ մի քիչ զվարթացրեց: Բայց մեր զրույցն այդ յերեկո կցկտուր եր դուրս գալիս:

Յերանյակը կճռւճը թոնրից հանեց և յերք հնաց թարեքից ամաններ ու հաց բերելու, առաւտանից աղ հանելու, մենք ել յերեքով նրա հետ գնացինք դեպի թարեքն ու աղամանը: Մի տեսակ վախ եր մտել մեր սիրտը և կարծես չեյինք ուզում հեռանալ Յերանյակից: Ամանները հափաքելիս, անկողինը ծալքից բերելիս մենք նրա հետ գնում գալիս եյինք նրանից անբաժան, մինչև վոր պառկեցինք իրար կողքի մի վերմակի տակ:

Յերկար ժամանակ քունս չեր տանում: Փակած աչքերիս առջև մշուշոտ շրջաններով զըծվում եյին՝ Զմեռը, թագավորը, Սահակը...

V

Հալրս ու մայրս մյուս առավոտը վաղ վերադան տուն: Հայրս զնաց իր գործին: Մայրս խմոր հունցեց, գաթա թիսեց ու լավաշների մեջ փաթաթելով տվեց ինձ, վոր տանեմ մորաքրոջու տուն՝ Սահակի պաշարի հետ զնելու համար:


Հաջորդ որը Սահակը պիտի ճանապարհվեր: Ամբողջ քաղաքը դուրս եր յեկել դարի զլուխը նորակոչիկներին ճանապարհ զցելու համար: Չորս փուրգոն պատրաստ կանգնած եյին այնտեղ: Գետնի վրա զատ-զատ խմբերով տարածված եյին ընտանիքները, վորոնց կենարոնում նստած եյին սգավոր մայրերն ու քույրերը և բարձրածայն վողք եյին ասում, ինչպես լինում եր մեռելոցներին գերեզմանատանը:

Նորակոչիկները հարբած խմբերով տխուրտիսուր յերգեր եյին ասում ու լսողներին լացացնում: Մի տեղից լսվում եր՝

«Յես զնում եմ ահ ու զարով,  
Ել չեմ դառնա տասը տարով—  
Մայր ու քույրեր՝ մնաք բարով  
Յետ չեմ դառնա տասը տարով»:

Զուռնան փչում եր տխուր յեղանակներ: Հասակավոր մարգիկ լուրջ գեմք ընդունած սիրտ եյին տալիս ծնողներին, ողի եյին խմում ու բարեմաղթություններ անում գնացողներին, վոր անփորձ գնան տեղ հասնեն, նամակն անպակաս անեն: Յերեխաններն իրենց խաղը մոռացած, մոր փեշերից բռնած՝ նրանց նայելով կամ լաց եյին լինում, կամ պահանջում եյի տուն դառնալ:

Չորի գլխից ձիավորների մի խումբ յերեաց:



— Հազախները... — ձայն տվեց մեկը:

Այս բառը շշուկով անցավ բազմության մեջ և բոլորին կարծես սթափեցրեց թմրածությունից:

Մարդիկ իրար անցան: Նստածները վերկացն: Սկսվեց վերջին հրաժեշտը: Հապճեպով փաթոթվեցին իրար, համբուրվեցին, որտակտուհեծանվեցին իրարից:

— Շնուտ արեք, որը ճաշ դարձավ, — ձայն տվեց ֆուրգոնչիներից մեկը:

Նորակոչիկներից մի քանիսը տեղավորվեցին ֆուրգոններում, իրերի վրա, մյուսները խուժումք վոտով առաջ ընկան:

Ֆուրգոնները ճոնչացին, դղրդացին, առաջ շարժվեցին փոշու ամպ բարձրացնելով: Դղրդո-

ցին միացավ հեռացողների ծանր, մելամաղձիկ յերգը՝

«Տանում են, աղե ջան, տանում են,  
ինձ քեզանից հանում են...»:

Յերբ կազակները մոտեցան, բազմությունը համարյա ցրվել եր: Մենք ձորի պոռանկից քաղաք իջնելիս մի անգամ միայն յետ նայեցինք՝ կազակների փափախներն եյին յերեսում ողի մեջ լողալով:

## VI

Նորակոչիկներին ճանապարհ զցելուց հետո կյանքը կարծես իր սովորական հունի մեջ մտավ: Հարազատներն ու մերձափորները լաց յեղան, մղկտացին, ապա հետզինետե հանդարտվելով հաշտացին իրականության հետ և ձենները փորը զցած, լուռը մորմոքում եյին միայն:

Թեև քաղաքի վրայով անցած փոթորիկը դադարել եր, բայց այդ որերի տարածված սարսափի շվաքը գեռ փոված եր քաղաքի վրա: Մարդիկ կարծես գեռ չեյին կարողանում ազատ շունչ քաշել:

Զինվորագրության որերին քաղաք եյին յեկել մի խումբ կազակներ «կարգը պահպանելու»: Թեև այս տարի նախորդ տարվա պես հայտնի ըմբոստացման դեպքեր չեյին յեղել, մարդիկ

չեյին ծեծվել ու բանտարկվել, բայց այս տարի  
յել նախորդ տարվա պես մթնոլորտում մի լուռ  
վախ կար թագնված:

Կազակների ներկայությունը ճնշում եր քա-  
ղաքացիներին: Սրանք աշխատում եյին իրենց  
զուսպ ու զգաստ պահել, անտարբեր ձևանալ,  
բայց ելի շատկաներով եյին խոսում կազակների  
ներկայության մասին:

Կազակներից մի քանի հոգի աեղավորվել եյին  
մեր հարևան Զաքարենց տանը: Այս մոտիկու-  
թյունը մեզ վրա առանձին ազդեցություն եր  
անում, մեզ ավելի յեր ճնշում: Կարծես մենք  
նախազգում եյինք, վոր այս մոտիկությունից  
մի դժբախտություն ե գալու:

Որը կիրակի յեր:

Այդ որը մենք քուֆթա եյինք յեփել, վորը  
տեղական ամենալընաբեր և ամենատարածված  
կերակուրներից մեկն եր համարվում: Մենք հա-  
ճախ չեյինք արժանանում այդ բախտին, և վոր  
որը քուֆթա եյինք ունենում, մեզ համար կա-  
տարյալ ուրախության օր եր լինում:

Սփոռցը զցվեց քուրսու վրա, և մենք բոլոր-  
վեցինք նրա շուրջը:

Նոր եյինք սկսել հաց ուտել, յերբ հայրս  
գտանալով փոքր քրոջս, ասաց.

— Մադթաղ ջան, մի թաս ջուր տուր:

Մադթաղը թռավ վոտքի, վազեց դռան մոտ  
և սկսեց կժից ջուր լցնել թասի մեջ:

— Սպասիր, սպասիր, — ասաց Յերանյակը  
վոտքի կանգնելով, — սպասիր, հայրիկ, զնամ նոր  
ջուր բերեմ ջրհորից:

Ասավ ու գույլը վերցնելով դուրս յելավ, ա-  
ռանց ուշք դարձնելու մորս հորդորին, թե՝ կա-  
րիք չկա, կժի ջուրն ել թարմ ե:

Հայրս սպասողական վիճակում՝ հացի փոք-  
րիկ պատառներ եր գնում բերանը, մանր ու  
դանդաղ ծամելով, Մենք ել, կարծես նրանից  
վարակվելով, սկսեցինք հանգարտ ծամել, աչք-  
ներս դռան կողմը դարձրած և ականջներս դե-  
պի դուրս՝ ձենի:

Մի քանի ըռապե անց հանկարծ մի ոտարոտի  
ձախ լսվեց՝ բարձր, խոպոտ ու ահալի, ինչպես  
ահարեկված տավարի բառաչյուն:

Այդ բառաչյունի հետ գուռն արադությամբ  
բացվեց ու շրխկալով դիպավ պատին: Ներս ըն-  
կավ Յերանյակը հևասպառ, յերեսն այլանդակված  
ու քաթանի պես սպիտակ: Տարորինակ վոստոս-  
տյունով, ինչպես վոտները ցանցի մեջ խճճվող  
թռչուն առաջ յեկագ նա ու գոռալով «վայ,  
մայրիկ ջան, դագախը», փովեց հատակին:

Մայրս սարսափահար վրա թռավ, նրան գլոր-  
կեց, իսկ հայրս շփոթմունքից կերակրով լի ափ-

սեն շուր տալով քուրսու վրա, վեր թռավ ու  
դուրս վաղեց:

Յես ել նրա յետեից գուրս թռա:

Մեր ընդտրձակ բակի մեջտեղը կանգնած եր  
մի կազակ, պլխարկը ծոծրակին գցած, խոխվ



մազերը ճակատին, արյունակոխ աչքերով։ Յե-  
րեսը ջղաձգությունից ծամածովում եր, բռունցք-  
ները սեղմվում ու բացվում եյին, վոտի վրա  
տատանվում եր, պատրաստ՝ գետին գլորվելու։

Հայրս քարացած, մնաց տեղում մեխված։  
Յես մտա հորս կողքը, աշխատելով հայացքս թագ-  
ցնել կազակի զարհուրելի գեմքից։

Կազակն աշխատում եր գալ դեպի հայրս,  
բայց յերկու քայլ անելուց հետո նրա իրանը

գետի յետ եր ծռվում, և նա չընկնելու համար  
կրկին յետ-յետ եր գնում, կամ վոտի վրա գլոր-  
վում եր շեղակի։ Նա գռուսմ եր այլանդակ ձայ-  
նով ու բռունցքները սեղմելով ու բաց անելով,  
հայրոյանքներ եր թափում ինձ անհասկանալի  
խոսքերով։ Նրա ձայնի վրա հարսանները գուրս  
թափվեցին։ Բայց գուրս թափվողները կախարդ-  
կածի նման կանգ եյին առնում տեղներում քա-  
րացած, մեխված, անձայ։ ու ապուշ կտրած։

Զաքարենց բակից գուրս թռավ մի ուրիշ կա-  
զակ, թամաշավորներին սաստեց, վորից շատերը  
ներս փախան, շտապ մոտեցավ ընկերոջը և թեր  
բռնելով սկսեց քաշ տալ դեպի տուն։ Հարբածը  
հայրոյեց նրան, փորձեց բռունցքով խփել, բայց  
յետ-յետ գնաց և կրունկը մի քարի զիպցնելով,  
մեջքի վրա փովեց գետին, սակայն ընկերոջ ոգ-  
նությամբ վոտի յելավ։ Ընկերը պալուլվեց  
(փաթաթվել) նրան և ինչ վոր խոսքեր ասելով,  
մեծ ուժով քաշ տվեց դեպի Զաքարենց տունը։

Այնտեղ ինչ վոր աղաղակներ լսվեցին, ապա  
ամեն ինչ հանդարտվեց։

Հայրս ու յես ներս մտանք։

Եերանյակը պառկած եր քուրսու կողքին գու-  
նատ՝ ապուշ հայացքը դեպի յերգիկը գցած։  
Շնչում որ ծանր, բերանը բաց ու խուփ անելով,  
ինչպես ծանր վերքից տանջված վիրավոր, ու

վոչ մի բառ չեր արտասահնում։ Հանկարծ նա-  
մնքրտաց, յերեսը թեքեց դեպի բարձը. բերանի-  
անկյունները ծովեցին. ճակատի վրա քրաինքի  
կաթիլներ բսան ու փոքրիկ-փոքրիկ հատիկներով  
նստած մնացին։ Մայրա նրա կողքին ընկած,  
ծնկներն եր տրորում, նրա բերանն ու ճակատն  
եր սրբում։

Յերեկոյան դեմ մոմ թափող պառավին կան-  
չեցինք, վորը տաշտաքերը կրակի վրա շիկացնե-  
լով մոմը քսեց տաշտաքերին ու թափեց թասի-  
սառը ջրի մեջ։ Սառած տափակ մոմին նայելով,  
ասաց, վոր վախեցել ե, «չարը խփել ե», պիտի  
վոտաբորբիկ տանել ս. Ոհաննես և ապա Նորադուզա-  
ս. Նշանի դռաներ մատաղ անել։

Յերեք որվա մեջ վոչ մի բառ չասաց Յե-  
րանյակը։ Յերեք որ մեր տան մեջ չլսվեց նրա  
ձայնը, վոր այնքան քաղցր եր հնչում ու այնպես  
կենդանությամբ լցնում եր մեր տունը։ Յերեք  
որ մայրս անքուն նրա կողքին նստած բոլոր  
այցելուներին մղկտալով պատմում եր, վոր յերեք  
որվա ընթացքում Յերանյակի աչքերը չեն կպել։

Իսկ գիշերները մրմնջալով անիծում եր թա-  
գավորին, կազակներին։

Յերանյակը աչքերը հառած մի կետի, նա-  
յում եր լուռ, հազիվ շնչելով, առանց նույնիսկ  
հառաջելու։

Յերբորդ որը յերեկոյան դեմ միայն մի ծանր  
տնքոց արձակեց ու աչքերը փակեց...

Դրանից հետո ել Յերանյակ չկար մեր տանը։  
Այսոր ել սավերի պես եմ հիշում նրան, ու  
ինձ թվում ե, վոր նա խկի չի յել յեղել, այլ  
յերազումս եմ տեսել միայն Յերանյակին։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զալիկը . . . . .	3
2. Ցեղասոր պատմությունը . . . . .	38
3. Քրոջ պատմությունը . . . . .	60

---

ՀՀ Ազգային գրադարան



NL0347135

11105

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

36-682



МАРГАР

# ЧАЛИК

РАССКАЗЫ

(На армянск. яз.)

С А Х Е Л Г А М И

Тифлис

1936